5539

1892

2(059)
И-45

2002

1891. №2681. 2113.

ՀՐԱՏ. ԿԵՆՏՐՈՆ. ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ

# ՕՐԱՑՈՅՑ

## 1892

ՆԱՀԱՆՋ ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Հայկեան ՏՅՁԴ 4384 Նահապետէն

եւ

Տոմար. Ը. ազգիս ՌՅԽԱ—1341.

---

*կազմեց*

ԳԻՒՏ ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

634

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Շարաձէ:

ՀՐԱՏ· ԿԵՆՏՐՈՆ· ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ

# ՕՐԱՑՈՅՑ

2(059)
Ա-45

## 1892

ՆԱՀԱՆՋ ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Հայկեան ՏՅՁԴ 4384 Բոլորականին,

Եւ

Տոմար. Ի. աղէքս ՌՅԽԱ—1341.

---

կազմեց

ԳԻՒՏ ՔԱՀ· ԱՂԱՆԵԱՆՑ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Շարաձէ։

Доз. ценз. Тиф., 13 Іюля, 1891 г.

49380-ով

ՀԵՏՍ. ԿԱՆ ԳՐ-ԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

35853-66

Тип. М. Шарадзе, Ник. у., № 21.

# ՔՐԻՍՏՈՍԻ
## 1892
## Հայկեան ՏՅՁԴ (4384)
եւ
## Տոմարական ՌՅԽԱ (1341)
## Նահանջ Թուականին

Գիր տարւոյն է . . . ՀԿ.
Եօթներեակը . . . . . ԳԴ.
Վերադիրը . . . . . ԺԱ.
Տանուտէրը . . . . . Խեցգետին.
Իննեւտասներեակը . . . Ժ (10)։

Բուն Հայները՝ ամ. քծ. գծ. դծ. բուն բարեկենդանից սկսած՝ աջակողմեան դասից են։

## ԷՖԻՄԷՐՏԷԻ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ 1892 ԹՈՒԻ ՀԱՄԱՐ։

Առաջիկայ տարին երաշտ եւ ցամաք կը լինի։ Խռովութիւն մարդկանց, մեծամեծ անասունների կոտորած, մանր չորքոտանի կենդանիների համար յաջողակ. ձէթ քիչ կը լինի, իսկ գինին եւ միրգ շատ։ Ձմեռուայ սկիզբը ցուրտ, մէջն անոյշ, վերջը քամոտ։ Գարունը ջրառատ, ցուրտ եւ եղեմնահար։ Ամառը սաստիկ քամոտ լինելու համար՝ անձրեւային. ցորենի եւ արտերի մի մասը կը վնասուի. ջրի հեղեղներ։ Աշնանը կը փչեն ջրածին քամիներ։ Աղաչենք Աստուծուն, որ երեխաների ու մարդոց խիստ տենդ չլինի։ Եղեամը շատ տեղերում խաղողին վնաս կտայ. արտերում կերեւան անտառի գազաններ ու թռչուններ։ Աղօթենք Աստուծուն, որ չլինի մահտարաժամ. երկրաշարժ եւ կայծակնահարութիւն։ Այս տարին արեգակը երկնքի վեցերորդ տանն է գտնւում, վասնորոյ սաստիկ հիւանդութիւններ կլինին—ցաւագարութիւն, մանաւանդ աչքերի. անասունների ցաւ ու կոտորած. ձէթի պակասութիւն։ Փայլածուն արեւելեան եւ Երեւակին կցած՝ ցոյց է տալիս որ մեծ վնասի ու տուժանքի կը

ենթարկուին թագաւորը եւ ար-
քունի գրագիրները. կշատանան
եւ կուրախանան երաժիշտներ
կոյսերի հետ: Լուսաբերը երկնքի
եօթներորդ տանը նշանակում է
կանանց եւ իգաբարոյ մարդոց
յաջողութիւն, եւ հարուած ռա-
միկներին: Մեծ կռիւ, սպանու-
թիւն եւ արիւնհեղութիւն կլինի.
բանտարկուածներից շատերը կը
փախչեն:

---

## ՇԱՐԺԱԿԱՆ ՏՕՆՔ ԵՒ ՄԻՋՈՑ ՈՒՏԻՔ 1891 ԹՈՒԻՆ

| | | |
|---|---|---|
| Օր Յայտնութեան | | Բշ. |
| Միջոց ուտիք աւուրք | | 21. |
| Առաջաւոր. բարեկ. | յունուար | 26. |
| Բուն բարեկենդան | փետր. | 16. |
| Զատիկ | ապրիլ | 6. |
| Երեւման խաչ | մայիս | 4. |
| Համբարձումն | " | 15. |
| Հոգեգալուստ | " | 25. |
| Ս. Լուսաւորչ. բարեկ. | յունիս | 15. |
| Վարդավառ | յուլիս | 13. |
| Միջոց շաբ. պահոց | | 5. |
| Վերափոխ. ս. Աստ. | օգոստ. | 16. |
| Միջոց շաբ. պահոց | | 4. |

Սուրբ Խաչ սեպտ. 13.
Ս. Գէորգայ բարեկ. „ 20.
Միջոց ուտիք շաբաթք 7.
Գիւտ Խաչ հոկտ. 25.
Յիսնակաց բարեկ. նոյեմբ. 15.
Ս. Յակովբ. բարեկ. դեկտ. 6.
Միջոց ուտիք աւուրք 18.

---

# ՅՈՒՆՈՒԱՐ

31 օր.

1 Դշ. դկ. գ. օր ծննդ. պահոց: Տարեմուտ և կաղանդ: Հայկայ Թուականի ՏՅՁԴ Քաղոց ԻԴ: Յ. և Ռ. անուանակոչութեան Տեառն և Բարսղի հայրապետին: 14

2 Եշ. աձ. գ. օր ծննդ. պահոց: 15
☉ լր. լս.—ձիւնալից օրեր

3 Ուր. ակ. ե. օր ծննդ. պահոց: 16

4 Շբ. բձ. գ. օր ծննդ. պահոց: 17

5 ✝ Կիր. բկ. Ճրագալոյց ծննդեան Քրիստոսի: Յերեկոյին գինի և պատարագին նախատօնակ: Նաւակատիք: 18

6 ✝ Բշ. գձ. ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ 19
և ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ
ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍ-
ՏՈՍԻ:
Ուտիք է մեզ ութն օր
անմիջայ:
Յ. և Ռ. Մկրտութեան
Տեառն:
7 ✝ Գշ. գկ. բ. օր ծննդ.:— 20
Յիշատակ մեռելոց:
8 Դշ. դձ. գ. օր ծննդեան: 21
Հայկայ թ. Արայ ա.:
9 Եշ. դկ. դ. օր ծննդեան: 22
10 Ուր. աձ. ե. օր ծննդեան: 23
◐ վջ. քռ. լս.—բքաբեր
հողմ:
11 Շբ. ակ. զ. օր ծննդեան: 24
12 ✝ Կիր. բձ. է. օր ծննդ.: 25
13 ✝ Բշ. բկ. ը. օր ծննդեան: 26
Եւ ՏՕՆ ԱՆՈՒԱՆԱԿՈ-
ՉՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵ-



ՐՈՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ
Յերեկոյին նախատօնակ:
14 Գշ. գձ. տօն ծննդեան 27
սրբոյն Յովհաննու կարա-
պետին:
15 Դշ. դկ. պահք: 28
16 Եշ. դձ. սրբոցն՝ Պետրոսի 29
հայրապետին, Վլասայ ե-
պիսկոպոսին և Աբիաղոմայ
սարկաւագին:
17 Ուր. դկ. պահք: 30
18 Շբ. աձ. սրբոցն՝ Անտօնի, 1
Տրիփոնի, Պարսամայ և
Ոնոփրիոսի ճգնաւորացն:
● ծն. լս. — ձիւնաբեր
հողմ:
19 ✝ Կիր. ակ. Ա. զկնի ծննդ- 2
դեան:
20 Բշ. բձ. սրբոցն՝ Թէոդոսի 3
Թագաւորին և մանկանցն
Եփեսոսի:

21 Գշ. բկ. սրբոցն՝ Կիրակոսի և մօրն Յօղիտայի: Եւ Գորդիոսի, Պօղիկտոսի և Գրիգորիսի: 4

22 Դշ. գձ. պահք: 5

23 Եշ. գկ. սրբոցն՝ Վահանայ Գողթնացւոյն: Եւգինեայ կուսին և հօրն նորա Փիլիպպոսի, և մօրն Կղօդեայ, և երկուց եղբարցն՝ Սերգեայ և Ապիտոնի, և երկուց ներքինեացն: 6

24 Ուր. դձ. պահք: 7

☽ առ. քռ. լս.—խառն օդ:

25 Շբ. դկ. սրբոցն՝ Աթանասի և Կիւրղի Հայրապետացն: 8

26 ✝ Կիր. աձ. Բ. զկնի ծննդեան: Բարեկենդան առաջաւորի պահոց: 9

27 Բշ. ակ. ա. օր պհ. առա- 10



ջաւորաց:

28 Գշ. բձ. բ. օր պհ. առաջաւորաց: 11

29 Դշ. բկ. գ. օր պհ. առաջաւորաց: 12

30 Եշ. գձ. դ. օր պհ. առաջաւորաց: 13

31 Ուր. դկ. ե. օր պհ. առաջաւորաց: Յիշատակ Յովնանու մարգարէին: 14

# ՓԵՏՐՈՒԱՐ

(29 օր).

1 Շբ. դձ. սրբոյն՝ Սարգսի 15
զօրավարին եւ որդւոյ նորա
Մարտիրոսին եւ չորեք-
տասան զինուորացն:
☉ լր. լս.—բուք և հողմ:
2 ✝ Կիր. դկ. Գ. զկնի ծնն- 16
դեան:
Ռ. Տեառնընդառաջ:
3 Բշ. աձ. սրբոց Ատոմանց 17
զօրավարացն:
4 Գշ. ակ. սրբոց Սուքիասանց 18
վկայիցն:
5 Դշ. բձ. պահք: 19
6 Եշ. բկ. սրբոց Ոսկեանց 20
քահանայիցն:
7 Ուր. գձ. պահք: 21

## ՓԵՏՐՈՒԱՐ

Հայկայ Թ.—Մեհեկի ա.:
8 Շբ. գկ. սրբոյն՝ ԻՍԱՀԱ- 22
ԿԱՅ Պարթեւի հայրա-
պետին մերոյ:
☾ վջ. քռ. լս.—ձիւն:
9 ✝ Կիր. դձ. Դ. զկնի ծնն- 23
դեան:
10 Բշ. դկ. սրբոյն՝ Մարկոսի 24
եպիսկոպոսին, Պիոնի քա-
հանային, Կիւրղի եւ Բե-
նիամինի ատրկաւագացն եւ
սրբոց վկայիցն՝ Աբդլմսե-
հի, Որմզդանայ եւ Սա-
յենի:
11 Գշ. աձ. սրբոց Ղեւոնդեանց 25
քահանայիցն:
12 Դշ. ակ. պահք: 26
13 Եշ. բձ. սրբոց ՎԱՐԴԱ- 27
ՆԱՆՑ զօրավարացն մերոց
հազար երեսուն եւ վեց
վկայից, որք կատարեցան

## ՓԵՏՐՈՒԱՐ

'ի մեծ պատերազմին:
Յիշատակ մեռելոց,
Տօն ազգային: Յերեկոյին
նախատօնակ:
14 ✝ Ուր. բկ. պահ.ք: ՏԵԱՌՆ- 28
ԸՆԴԱՌԱՋ:
15 Շբ. գձ. սրբոյն՝ Կոստանդ- 29
նուպօլսոյ սուրբ ժողովոյն
հարիւր յիսուն հայրապե-
տացն:
16 ✝ Կիր. դկ. Բուն բարե- 1
կենդան:
Եւս Յ. և Թ.:
● ծն. լս.—անձրեւախառն
հողմ:
17 Բշ. աձ. ա. օր մեծի պա- 2
հոց:
18 Գշ. ակ. բ. օր մեծի պահ.: 3
19 Դշ. բձ. գ. օր մեծի պահ.: 4
20 Եշ. բկ. դ. օր մեծի պահ.: 5
21 Ուր. գձ. ե. օր մեծի պահ.: 6

## ՓԵՏՐՈՒԱՐ

22 Շբ. դկ. զ. օր մեծի պահ.: 7
Սրբոյն Թէոդորոսի զօրա-
վարին:
23 ✝ Կիր. դձ. Բ. քառասա- 8
նորդական պահոց:
☽ առ. քռ. լս.—երբեմն
պարզ, երբեմն խառն:
24 Բշ. դկ. ը. օր մեծի պահ.: 9
25 Գշ. աձ, թ. օր մեծի պահ.: 10
26 Դշ. ակ. ժ. օր մեծի պահ.: 11
Ծնունդ Ն. Կ. Մ. Ա-
ՂԷՔՍԱՆԴՐ ԱՂԷՔՍԱՆ-
ԴՐՈՎՉԻ:
27 Եշ. բձ. ժա. օր մեծի պահ.: 12
28 Ուր. բկ. ժբ. օր մեծի պահ.: 13
29 Շբ. գձ. ժգ. օր մեծի պահ.: 14
Սրբոյն՝ Կիւրղի Երուսա-
ղէմայ հայրապետին, եւ
միւս Կիւրղի եպիսկոպո-
սին եւ մօրն նորա Աննայի:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека

# ՄԱՐՏ

(31 օր).

1 ✝ Կիր. դկ. Դ. քառասնորդական պահոց: 15

ԱՆԱՌԱԿԻՆ:

2 Բշ. դձ. ժե. օր մեծի պահ.: 16

☺ լր. լս.—փոփոխական օրեր:

Գահակալութիւն Ն. Կ. Մ. ԱՂԷՔՍԱՆԴՐ ԱՂԷՔՍԱՆԴՐՈՎՉԻ:

3 Գշ. դկ. ժզ. օր մեծի պահ.: 17

4 Դշ. աձ. ժէ. օր մեծի պահ.: 18

5 Եշ. ակ. ժը. օր մեծի պահ.: 19

6 Ուր. բձ. ժթ. օր մեծի պահ.: 20

7 Շբ. բկ. ի. օր մեծի պահ.: 21

Սրբոյն Յովհաննու Երուսաղէմայ հայրապետին եւ

ՄԱՐՏ

սրբոց հայրապետացն մերոց՝ Յովհաննու Օձնեցւոյն, Յովհաննու Որոտնեցւոյն եւ Գրիգորի Տաթեւացւոյն:

8 ✝ Կիր. դձ. Դ. քառասնորդական պահոց: 22

ՏՆՏԵՍԻՆ:

Հայկայ թ.—Արեգ ա.:

9 Բշ. դկ. իբ. օր մեծի պահոց: 23

☾ վջ. քռ. լս. — երբեմն անձրեւ:

10 Գշ. դձ. իգ. օր մեծի պահոց: 24

11 Դշ. դկ. իդ. օր մեծի պահոց: 25

12 Եշ. աձ. իե. օր մեծի պահոց: 26

13 Ուր. ակ. իզ. օր մեծի պահ.: 27

14 Շբ. բձ. իէ. օր մեծի պահոց: Սրբոց մանկանցն քառասնից, որք 'ի Սեբաստիա կատարեցան: 28

15 ✝ Կիր. բկ. Ե. քառասնորդական 29

նորդական պահոց:
ԴԱՏԱՒՈՐԻՆ:
16 Բշ. դձ. իթ. օր մեծի պահ.: 30
17 Գշ. դկ. լ. օր մեծի պահոց: 1
⊕ ծն. Զատկ. լս.—կար-
կրտախառն հողմ:
18 Դշ. դձ. լա. օր մեծի պահ.: 2
19 Եշ. դկ. լբ. օր մեծի պահ.: 3
20 Ուր. աձ. լգ. օր մեծի պա- 4
հոց: Յերեկոյին նախատօ-
նակ:
21 ✝ Շբ. ակ. լդ. օր մեծի 5
պահոց: Սրբոյն ԳՐԻԳՈՐԻ
Լուսաւորչին մերոյ չարչա-
րանաց եւ մտին 'ի Վի-
րապն:
22 ✝ Կիր. բձ. Զ. քառաս- 6
նորդական պահոց:
ԳԱԼՍՏԵԱՆ:
23 Բշ. բկ. լզ. օր մեծի պահ.: 7
24 Գշ. գձ. լէ. օր մեծի պահ.: 8



☽ առ. քռ. լս.—Երբեմն
պարզ:
25 Դշ. դկ. լը. օր մեծի պահ.: 9
Յ. եւ Ռ. աւետումն:
26 Եշ. գձ. լթ. օր մեծի պահ.: 10
27 Ուր. դկ. խ. օր մեծի պահ.: 11
28 Շբ. աձ. խա. օր մեծի պա- 12
հոց: Յիշատակ յարու-
թեան Ղազարու:
29 ✝ Կիր. ակ. ԾԱՂԿԱ- 13
ԶԱՐԴ: Յերեկոյին դռնա-
բացէք:
Ռ. Ծաղկազարդ:
30 Աւ. Բշ. բձ. պահք: 14
31 Աւ. Գշ. բկ. պահք: Յի- 15
շատակ տասն կուսանաց:
⊙ Առաջ. լր. լս.—ամպա-
մած եղանակ:

# ԱՊՐԻԼ

(30 օր).

1 Աւ. Դշ. գձ. պահք: 16
2 Աւ. Եշ. գկ. պահք: Յի- 17
շատակ Ոտնալուայի:
3 Աւ. Ուր. գձ. պահք: Յի- 18
շատակ չարչարանաց եւ
խաչելութեան Տեառն մե-
րոյ Յիսուսի Քրիստոսի:
4 Աւ. Շբ. դկ. Ճրագալոյց ս. 19
Զատկի: Յերեկոյին ս.
պատարագից յետոյ նախա-
տօնակ: Նաւակատիք:
5 ✝ Կիր. Ա աձ. ԶԱՏԻԿ: 20
Ուտիք է մեզ անմիջոց
մինչեւ ցՀամբարձումն:
Եւս Զատիկ Յ եւ Ռ :
6 ✝ Ա. Բշ. ակ. բ օր Զատ- 21
կի: Յիշատակ մեռե-

## ԱՊՐԻԼ

լոց: Յերեկոյին նախա-
տօնակ:
7 ✝ Ա. Գշ բձ. գ օր Զատ- 22
կի. ԱՒԵՏՈՒՄՆ Ս. ԱՍ-
ՏՈՒԱԾԱԾՆԻ
☾ վՁ. քռ. լս —բարեխա-
ռըն օդ.
Հայկայ թ. Ահեկան ա.
8 Ա. Դշ. բկ. դ. օր Զատկի. 23
9 Ա. Եշ. գձ. ե. օր Զատկի. 24
10 Ա. Ուր. գկ. զ. օր Զատկի. 25
11 Ա. Շբ. դձ. է. օր Զատկի. 26
Յիշատակ գլխատման սրբ-
բոյն Յովհաննու Մկրտչի.
12 ✝ Բ. Կիր. դկ. Նոր կի- 27
րակի (կրկնազատիկ).
13 Բ. Բշ. աձ. թ. օր Յինանց. 28
14 Բ. Գշ. ակ. ժ. օր յինանց. 29
15 Բ. Դշ. բձ. ժա. օր յինանց. 30
16 Բ. Եշ. բկ. ժբ. օր յինանց. 1
● ծն. լս.—պարզ եղանակ.

## ԱՊՐԻԼ

| | | |
|---|---|---|
| 17 | Բ. Ուր. գձ. ժգ. օր յինանց. | 2 |
| 18 | Բ. Շբ. գկ. ժդ. օր յինաննց. | 3 |
| 19 | ✝ Գ. Կիր. դձ. Աշխարհա-մատրան (կանաչ) կիւրակէ. | 4 |
| 20 | Գ. Բշ. դկ. ժզ. օր յինանց. | 5 |
| 21 | Գ. Գշ. աձ. ժէ. օր յինանց: | 6 |
| 22 | Գ. Դշ. ակ. ժը. օր յինանց: | 7 |
| 23 | Գ. Եշ. բձ. ժթ. օր յինանց: ◑ առ. քռ. լս.—երբեմն պարզ, երբեմն անձրև: | 8 |
| 24 | Գ. Ուր. բկ. ի. օր յինանց: | 9 |
| 25 | Գ. Շբ. գձ. իա. օր յինանց: | 10 |
| 26 | ✝ Դ. Կիր. գկ. Կարմիր կիրակէ: | 11 12 |
| 27 | Դ. Բշ. դձ. իգ. օր յինանց: | 13 |
| 28 | Դ. Գշ. դկ. իդ. օր յինանց: | 14 |
| 29 | Դ. Դշ. աձ. իե. օր յինանց: | 15 |
| 30 | Դ. Եշ. ակ. իզ. օր յինանց: | 16 |

## ՄԱՅԻՍ

(31 օր).

| | | |
|---|---|---|
| 1 | Դ. Ուր. բձ. իէ. օր յինանց: ☉ լր. լս.—կարկտախառն անձրեւ: | 16 |
| 2 | Դ. Շբ. բկ. իը. օր յինանց: | 17 |
| 3 | ✝ Ե. Կիր. գձ. տօն ԵՐԵՒՄԱՆ ՍՐԲՈՅ ԽԱՉԻ: | 18 |
| 4 | Ե. Բշ. գկ. լ. օր յինանց: | 19 |
| 5 | Ե. Գշ. դձ. լա. օր յինանց: | 20 |
| 6 | Ե. Դշ. դկ. լբ. օր յինանց: Ծնունդ Ն. Կ. Բ. Թաւանդլի Կայսեր ՆԻԿՈԼԱՅ ԱՂԷՔՍԱՆԴՐՈՎՁԻ: | 21 |
| 7 | Ե. Եշ. աձ. լգ. օր յինանց: ☾ վջ. քռ. լս.—պայծառ օդ: Հայկայ թ.—Մարերի ա. | 22 |

8 Ե. Ուր. ակ. լդ. օր յինանց: 23
9 Ե. Շբ. բձ. լե. օր յինանց: 24
Յ. և Ռ. փոխադրութիւն նշխարաց ս. Նիկողայոսի սքանչելագործին:
10 ✝ Զ. Կիր. բկ. լզ. օր յինանց: 25
11 Զ. Բշ. գձ. լէ. օր յինանց: 26
12 Զ. Գշ. գկ. լը. օր յինանց: 27
13 Զ. Դշ. դձ. լթ. օր յինանց: 28
14 ✝ Զ. Եշ. դկ. խ. օր յինանց: ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՍԻ: 29
Վ իճակ.
Յ. և Ռ. ևս Համբարձումն.
15 Զ. Ուր. աձ. խա. օր յինանց. պահք. 30

Թագադրութիւն Նորին Կ. Մեծութեանց Օգոստ.



Կայսեր ԱՂԵՔՍԱՆԴՐ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՎՉԻ և Կայսրուհւոյ ՄԱՐԻԱ ՖԵՕԴՈՐՈՎՆԱՅԻ:

16 Զ. Շբ. ակ. խբ. օր յինանց· 1
● ծն. լս.—բարեխառն.
17 ✝ Է. Կիր. բձ. ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԴ. 2
18 Է. Բշ. բկ. խդ. օր յինանց. 3
19 Է. Գշ. գձ. խե. օր յինանց. 4
20 Է. Դշ. գկ. խզ. օր յինանց. պահք: 5
21 Է. Եշ. դձ. խէ. օր յինանց 6
22 Է. Ուր. դկ. խը. օր յինանց. պահք: 7
23 Է. Շբ. աձ. խթ. օր յինանց: 8
◐ առ. քռ. լս.—մեղմ օդ:
24 ✝ Կիր. ակ. Ծ. օր յինանց: ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ (Պենտեկոստէ): 9

# ՄԱՅԻՍ

Նաւ Յ. և Ռ.
Բարեկենդան Եղիական պահոց:

25 Բշ. բձ. բ. օր Հոգեգ. պահք. 10
26 Գշ. բկ. գ. օր Հոգեգ. պահք: 11
27 Դշ. գձ. դ. օր Հոգեգ. պահք: 12
28 Եշ. գկ. ե. օր Հոգեգ. պահք: 13
29 Ուր. դձ. զ. օր Հոգեգ. պահք: 14
30 Շբ. դկ. է. օր Հոգեգ. 15

☉ լր. լս.—երբեմն խառն

31 ✝ Կիր. աձ. Ա. կիւրակէ յարութեան: Յիշատակ Եղիայի մարգարէին. Յերեկոյին նախատօնակ: 16

Առաջին պահ—Հարսանիք:

# ՅՈՒՆԻՍ

(30 օր).

1 Բշ. ակ. սրբոց կուսանացն Հռիփսիմեանց: Յերեկոյին նախատօնակ: 17
2 Գշ. բձ. սրբոց կուսանացն Գայիանեանց: 18
3 Դշ. բկ. պահք: Յերեկոյին նախատօնակ: 19
4 Եշ. գձ. սրբոցն Յովհաննու Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին: 20
5 Ուր. գկ. պահք: Յերեկոյին նախատօնակ: 21

☾ վջ. քռ. լս.—ջերմ օդ:

6 ✝ Շբ. դձ. սրբոյն ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ մերոյ ելն ի վիրապէն: 22

Հայկայ Թ.—Մարգաց ա.

7 ✝ Կիր. դկ. Բ. գկնի Հո- 23
գեգալստեան: ՏՕՆ ԿԱ-
ԹՈՒՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ:
(Հայաստանեայց բոլոր ե-
կեղեցիներում կատարւում
է մեծահանդէս տօնախմ-
բութիւն):

Հարսանիք:

8 Բշ. աձ. սրբոյն մանկանցն 24
Բեթղեհէմի, և Ակակիոսի
վկային, Մովկիմայ քահա-
նային և Կոդրատիոսի զի-
նուորին:

9 Գշ. ակ. սրբոց կուսանացն 25
Նունեայ և Մանեայ:

10 Դշ. բձ. պահք: 26

11 Եշ. բկ. սրբոց իշխանացն 27
Սահակայ և Յովսէփայ և
վկայիցն Սարգսի և Բա-



գոսի:

12 Ուր. գձ. պահք: 28

13 Շբ. գկ. սրբոյն՝ Ներսիսի 29
մեծի Հայրապետին մերոյ
և Խադայ եպիսկոպոսին:

14 ✝ Կիր. դձ. Գ. զկնի Հո- 30
գեգալստեան: Բարեկեն-
դան ս. Լուսաւորչի պահ.

15 Բշ. դկ. պահք: Սրբոյն՝ Ե- 1
պիփանու Կիպրացւոյն, Բա-
բելայ հայրապետին և ե-
րից աշակերտաց նորին:

⊛ Ծն. լս.—Շոգ, երբեմն
անձրև.

16 Գշ. աձ. պահք: Սրբոյն՝ 2
Կոստանդիանոսի թագա-
ւորին և մօրն նորա Հե-
ղինեայ:

17 Դշ. ակ. պահք: 3

18 Եշ. բձ. պահք: Սրբոյն՝ 4
Թէոդիտոսի Գաղատաց-

ւսյն, Թալէլեայ բժշկին և
եօթն կուսանացն, որք
յԱնկիւրիա կատարեցան:

19 Ուր. բկ. պահք: Յերեկո- 5
յին նախատօնակ:

20 ✝ Շբ. գձ. Գիւտ նշխա- 6
րաց սրբոյն ԳՐԻԳՈՐԻ
ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ մերոյ:

21 ✝ Կիր. գկ. Դ. զկնի Հո- 7
գեգալստեան:
Հարսանիք:

22 Բշ. գձ. սրբոց վկայիցն՝ Ան- 8
տոնինոսի, Թէոփիլոսի,
Անիքտոսի եւ Փոտինոսի:
☽ առ. քռ. լռ.—խառն
եղանակ.

23 Գշ. դկ. սրբոյն՝ Դանիէլի 9
մարգարէին եւ երից ման-
կանցն Սեդրաքայ, Միսա-
քայ եւ Աբեդնագովի:

24 Դշ. աձ. պահք: 10

ՅՈՒՆԻՍ

25 Եշ. ակ. սրբոց Թարգման- 11
չացն մերոց ՍԱՀԱԿԱՅ և
ՄԵՍՐՈՎՊԱՅ:

26 Ուր. բձ. պահք: 12

27 Շբ. բկ. սրբ.՝ Տրդատայ Թա- 13
գաւորին մերոյ և Աշխէն տի-
կնոջն և Խոսրովիդխտոյն:
Յերեկոյին նախատօնակ:

28 ✝ Կիր. գձ. Ե. զկնի Հո- 14
գեգալստեան: ԳԻՒՏ ՏՈՒ-
ՓՈՅ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾ-
ՆԻ: Հարսանիք:

29 Բշ. գկ. սրբոյն՝ Կալիստրա- 15
տոսի և քառասուն և ինն
վկայից և Գունկիանոսի
քահանային:
Յ. և Ռ. սրբոց առաքե-
լոցն Պետրոսի եւ Պօղոսի:

30 Գշ. գձ. սրբոյն Զաքարիա- 16
յի մարգարէին:
☉ լռ. լռ.—տօթ:

# ՅՈՒԼԻՍ

(31 օր).

1 Դշ. դկ. պահք: 17
2 Եշ. ած. սրբոյն Եղիսէի 18
մարգարէին:
3 Ուր. ակ. պահք: 19
4 Շբ. բծ. սրբոց երկոտասա- 20
նից առաքելոցն Քրիստո-
սի եւ Պօղոսի երեքտասան
առաքելոյն:
5 ✝ Կիր: բկ. Զ. զկնի Հո- 21
գեգալստեան: Բարեկեն-
դան Վարդավառի պա-
հոց.
6 Բշ. գծ. ա. օր Վարդավա- 22
ռի պահոց:
☾ վջ. քռ. լս.—շատ տօթ:
Հայկայ թ.—Հրոտից ա.

## ՅՈՒԼԻՍ

7 Գշ. գկ. բ. օր Վարդ. պահ. 23
8 Դշ. գծ. գ. օր. Վարդ. պահ. 24
9 Եշ. դկ. դ. օր Վարդ. պահ. 25
10 Ուր. ած. ե. օր Վարդ. պահ. 26
11 Շբ. ակ. Յիշատակ տապա- 27
նակին Հնոյ և տօն նո-
րոյս սուրբ եկեղեցւոյ:
Նաւակատիք:
12 ✝ Կիր. բծ. ՎԱՐԴԱՎԱՌ: 28
13 ✝ Բշ. բկ. բ. օր Վարդ.— 29
Յիշատակ մեռելոց:
14 Գշ. գծ. գ. օր. Վարդ. 1
⊛ ծն. լս.—անախորժ օ-
րեր և հողմ:
15 Դշ. գկ. պահք: 2
16 Եշ. դծ. սրբոյն Եսայեայ 3
մարգարէին:
17 Ուր. դկ. պահք: Յերեկո- 4
յին նախատօնակ.
18 ✝ Շբ. ած. սրբոյն՝ ԹԱ- 5
ԴԷՈՍԻ առաքելոյն մե-

րոյ և Սանդխտոյ կուսին.
19 ✝ Կիր. ակ. Բ. գկնի Վար- 6
դավառի: Հ ա ր ս ա ն ի ք:
20 Բշ. բծ. սրբոցն՝ Կիպրիանո- 7
սի եպիսկոպոսին և քա-
ռասուն և հինգ վկայիցն,
և սրբոց կուսանացն՝ Յուս-
տինեայ, Եւփիմեայ և
Քրիստինեայ:
21 Գշ. բկ. սրբոցն՝ Աթանա- 8
գինեայ եպիսկոպոսին և
տասն աշակերտացն և
հինգ վկայիցն:
☽ առ. քռ. լս.—տապա-
խառն հողմ.
22 Դշ. գծ. պահք: 9
Անուանակոչութիւն Ն.
Կ. Մ. Կայսրուհւոյ ՄԱ-
ՐԻԱ ՓԷՕԴՈՐՈՎՆԱՅԻ:
23 Եշ. գկ. սրբոց նախահարցն՝ 10



Ադամայ, Աբէլի, Սէթայ,
Ենովսայ, Ենովքայ, Նոյի,
Մելքիսեդեկի, Աբրահա-
մու, Իսահակայ, Յակով-
բայ, Յովսէփայ, Մովսիսի,
Ահարոնի, Եղիազարու, Յե-
սուայ, Սամուէլի, Սամփ-
սոնի, Յեփթայեայ, Բա-
րակայ, Գեդէօնի եւ այ-
լոց սրբոց նախահարցն:
24 Ուր. դծ. պահք: 11
25 Շբ. դկ. սրբոց որդւոց եւ 12
թոռանց սրբոյն Գրիգորի
Լուսաւորչին մերոյ՝ Արիս-
տակիսի, Վրթանիսի, Յուս-
կանն, Գրիգորիսի եւ Դա-
նիէլի:
26 ✝ Կիր. ած. Գ. գկնի Վար- 13
դավառի: Հ ա ր ս ա ն ի ք:
27 Բշ. ակ. սրբոց Մակաբայե- 14
ցւոցն Եղիազարու քահա-

նային, եւ Շամունեայ եւ
եօթն որդւոց նորին:
28 Գշ. բձ. սրբոց երկոտասան 15
մարգարէիցն՝ Ովսեայ, Ա-
մովսայ, Միքիայ, Յովէ-
լեայ, Աբդիու, Նաւումայ,
Ամբակումայ, Յօնանու, Սո-
փոնիա, Անգեայ, Զաքա-
րիայ եւ Մաղաքիայ:
☉ լր. լս.—խառն օդ:
29 Դշ. բկ. պահք: 16
30 Եշ. գձ. սրբոցն՝ Սոփիայ եւ 17
երից դստերացն՝ Պիս-
տոսի, Ելպիսի եւ Ագապի:
31 Ուր. գկ. պահք: 18

# ՕԳՈՍՏՈՍ

(31 օր).

1 Շբ. դձ. սրբոց Հայրապե- 19
տացն Աթանասի եւ Կիւր-
ղի եւ Գրիգորի աստուա-
ծաբանին:
2 ✝ Կիր. դկ. Դ. զկնի Վար- 20
դավառի: Հ ա ր ս ա ն ի ք:
3 Բշ. աձ. սրբոցն՝ Եւգինեայ 21
կուսին եւ հօրն նորա Փի-
լիպպոսի, եւ մօրն Կղօդեայ,
եւ երկուց եղբարցն Սեր-
գեայ եւ Ապիտոնի, եւ
երկուց ներքինեացն. եւ
վկայիցն՝ Եւգինէոսի, Մա-
կարիոսի, Վալերիոսի, Կան-
դիտոսի եւ Ակիւղասայ:
☾ վջ. քռ. լս.—անձրեւա-

բեր հողմ:

4 Գշ. ակ. սրբոյն Անդրէի զօրավարին, եւ բանակի նորին. Կաղլինիկոսի եւ Գոմետեայ վկայիցն: 22

5 Դշ. բձ. պահք: 23

Հայկայ Թ.—Աւելեաց ա.

6 Եշ. բկ. սրբոյն Անդրիանոսի եւ կնոջն Անատօլայ. Թէոդորոսի եւ Եղեւթիւրոսի վկայիցն: 24

Յ. եւ Ռ. վարդավառ:

7 Ուր. դձ. պահք: 25

8 Շբ. դկ. Եփեսոսի սուրբ ժողովոյն՝ երկու հարիւր հայրապետացն: 26

9 ✝ Կիր. դձ. Ե. զկնի վարդավառի: Բարեկենդան ս. Աստուածածնի պահոց: 27

10 Բշ. դկ. ա. օր Աստ. պահ. 28

11 Գշ. աձ. բ. օր Աստ. պահ. 29



Նաւասարդ ա.: Ամանորայ եւ տարեմուտ Հայկեան մեծ թուականին—ՏՅՁԵ—4385 եւ մեր տոմարի նորոգութեան ՌՅԽԲ—1342:

12 Դշ. ակ. գ. օր Աստ. պահ. 30

13 Եշ. բձ. դ. օր Աստ. պահ. 1

● ծն. լս.—անձրեւներ:

14 Ուր. բկ. ե. օր Աստ. պահ. 2

15 Շբ. գձ. տօն Շողակաթին սրբոյ Էջմիածնի ըստ տեսլեան սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ: Նախատօնակ: Նաւակատիք: 3

Յ. եւ Ռ. վերափոխումն.

16 ✝ Կիր. գկ. ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ: 4

Ինն օր նախատօնակ: Զկնի ս. պատարագին կատար-

ւում է խաղողի օրհնու-
թիւն:

17 ✝ Բշ. դձ. բ. օր վերա- 5
փոխման:
Յիշատակ մեռելոց:

18 Գշ. դկ. գ. օր վեր. 6

19 Դշ. աձ. դ. օր վեր.: Պահք: 7
☽ Առ. քռ. լս.—ամպած:

20 Եշ. ակ. ե. օր վեր. 8

21 Ուր. բձ. զ. օր. վեր.: Պահք: 9

22 Շբ. բկ. է. օր վեր. 10

23 ✝ Կիր. գձ. ը. օր վեր. 11

24 Բշ. գկ. թ. օր վեր. 12

25 Գշ. դձ. սրբոյն Յովակի- 13
մայ եւ Աննայի ծնողաց
ս. Աստուածածնի եւ կա-
նանց իւղաբերից:
Յիշատակ նուաճման արե-
ւելեան Կովկասու:

26 Դշ. դկ. պահք: 14



27 Եշ. աձ. սրբոյն Երեմիայի 15
մարգարէին:

28 Ուր. ակ. պահք: 16
◎ Լր. լս.—փոփոխական:

29 Շբ. բձ. սրբոց առաքե- 17
լոցն՝ Թովմայի, Յակով-
բայ եւ Շմաւոնի: Յերե-
կոյին նախատօնակ:
Յ՝ եւ Ռ. Գլխատումն
Յովհաննու Մկրտչին:

30 ✝ Կիր. բկ. Գ. զկնի ս. 18
Աստուածածնի: ԳԻՒՏ
ԳՕՏԻՈՅ Ս. ԱՍՏՈՒԱ-
ԾԱԾՆԻ: Հարսանիք:
Անուանակոչութիւն Ն.
Կ. Մ. Օգոստափառ Կայ-
սեր ԱՂԷՔՍԱՆԴՐ ԱՂԷՔ-
ՍԱՆԴՐՈՎՉԻ:

31 Բշ. գձ. սրբոյն Ստեփան- 19
նոսի Ուլնեցւոյն եւ վկա-

յեցն՝ Գոհարինեայ, Ծամիղէսի, Տուքիկոսի և Ռոտիկոսի:

# ՍԵՊՏԵՄԲԵՐ

(30 օր).

1 Գշ. դկ. սրբոց Մարգարէիցն՝ Եղեկիէլի, Եզրի եւ Զաքարիայի հօրն Յովհաննու Մկրտչին: 20

2 Դշ. դձ. պահք: 21

3 Եշ. դկ. սրբոցն՝ Յովհաննու Կարապետին եւ Յուբայ արդարոյն: 22

☾ վջ. քռ. լս.—բարեխառն:

4 Ուր. աձ. պահք: 23

5 Շբ. ակ. Նիկիոյ սուրբ ժո- 24



ղովոյն երեք հարիւր տասն եւ ութն հայրապետացն:

6 ✝ Կիր. բձ. Դ. գլնի ա. Ատ.: Բարեկենդան ս. Խաչի պահոց: 25

7 Բշ. բկ. ա. օր պահոց ս. Խաչի: Յերեկոյին Նախատօնակ: 26

8 ✝ Գշ. գձ. բ. օր պահոց ս. Խաչի: ՏՕՆ ԾՆԸՆԴԵԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ 'Ի ՅԱՆՆԱՅԷ: Յ. եւ Ռ. եւս ծնունդ ս. Աստուածածնի: 27

9 Դշ. գկ. գ. օր պահոց ս. Խաչի: 28

10 Եշ. դձ. դ. օր պահոց ս. Խաչի. 29

Հայկայ Թ.—Հոռի ա.

11 Ուր. դկ. ե. օր պահոց ս. Խաչի: 1

◎ Ծն. լու.—անձրեւ եւ հողմ:

12 Շբ. աձ. տօն եկեղեցւոյ 'ի Նաւակատիս սրբոյ Խաչին: Նաւակատիք: 2

13 ✝ Կիր. ակ. ԽԱՉՎԵՐԱՑ: Ցերեկոյին Թափոր: 3

14 ✝ Բշ. բձ. Տօն Խաչին:— Յիշատակ մեռելոց: Յ. եւ Ռ. Խաչվերաց: 4

15 Գշ. բկ. Տօն եկեղեցւոյ: 5

16 Դշ. գձ. պահք: Տօն եկեղ. 6

17 Եշ. գկ. Տօն եկեղեց. 7

☽ առ. քառ. լու.—բարեխառն եւ պարզ:

18 Ուր. դձ. պահք: Տօն Խաչի. 8

19 Շբ. դկ. Տօն Խաչի: 9

20 ✝ Կիր. աձ. Բ. զկնի ս. Խաչի: Բարեկենդան վարագայ Խաչի: 10

21 Բշ. ակ. պահք: Սրբոյն 11



Մամասայ, Փիլիկտիմոնի եւ Սիմէօնի Սիւնակեցւոյն:

22 Գշ. բձ. պահք: Սրբոց կուսանացն Փեփրոնեայ, Մարինեայ եւ Շուշանայ դստեր մեծին Վարդանայ: 12

23 Դշ. բկ. պահք: 13

24 Եշ. գձ. սրբոց հայրապետացն Բարսղմու, Անթիմոսի եւ Եղանոսի: 14

25 Ուր. գկ. պահք: 15

☺ լր. լու.—ախորժելի օրեր:

26 Շբ. դձ. սրբոյն Գէորգայ զօրավարին, Ադրաստոսի եւ Ռոմանոսի երգեցողին: Յ. եւ Ռ. Յովհաննու Աւետարանչին: 16

27 ✝ Կիր. դկ. Գ. զկնի ս. Խաչի: Տօն Վարագայ ս. 17

## ՍԵՊՏԵՄԲԵՐ

Խաչի: Հարսանիք:
28 Բշ. աձ. սրբոցն՝ Դաւթի 18
Դունեցւոյն և վկայիցն
Ղամբէոսի և Ղամբէուհ-
ւոյն:
29 Գշ. ակ. սրբոցն՝ Եւս- 19
տաթէոսի և կնոջ նո-
րա Թէոփիստոսի և եր-
կուց որդւոցն, և կու-
սանացն Երմոնեայ և
Նեքտառինեայ:
30 Դշ. բձ. պահք: 20

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

(31 օր).

1 Եշ. բկ. սրբոց իշխանացն 21

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

Սահակայ և Համազասպայ:
Յ. և Ռ. պաշտպանու-
թիւն ս. Աստուածածնի:
2 Ուր. գձ. պահք: 22
☾ վՋ. քռ. լս.—պարզ:
3 Շբ. գկ. սրբ. եօթանասուն և 23
երկու աշակերտ. Քրիստոսի:
4 ✝ Կիր. դձ. Դ. զկնի ս.
Խաչի: Հարսանիք: 24
5 Բշ. դկ. սրբոցն՝ Փոկասու
Հայրապետին և Երանոսի 25
հետեւողի առաքելոցն:
6 Գշ. աձ. սրբոց կուսանացն՝
Թեկղի, Մարվառեայ եւ 26
Պեղիգեայ:
7 Դշ. ակ. պահք:
8 Եշ. բձ. սրբոց՝ Պանդալէոնի 27
բժշկին, Երմողեայ քահան. 28
եւ Եպրաքսեայ կուսին:
9 Ուր. բկ. պահք: 29
10 Շբ. գձ. սրբոց Թադդ- 30

մանչաց վարդապետացն մե-
րոց՝ Մեսրովպայ, Եղիշէի,
Մովսիսի քերթողին, Դաւ-
թի անյաղթ փիլիսոփա-
յին, Գրիգորի Նարեկաց-
ւոյն և Ներսիսի կլայեցւոյն:
Հայկայ թ.—Սահմի ա.
11 ✝ Կիր. դկ. Ե. զկնի ս. 1
խաչի: Հ ա ր ս ա ն ի ք:
☉ Ծն. լս.—փոփոխական:
12 Բշ. դձ. Գիւտ նշխարաց 2
սրբոյն Գրիգորիսի Աղուա-
նից կաթուղիկոսի և սրբ.
Հարցն Թաթլոյ, Վարոսի
և Թումասու, Անտոնի և
Կրօնիդեայ, և եօթն խոտա-
ճարակացն, որք յինակնեայ
վանսն կատարեցան:
13 Գշ. դկ. սրբոց առաքելոցն՝ 3
Անանիայի, Մատթէի, Բառ-
նաբայ, Փիլիպպոսի, Յով-



հաննու, Շիղայի և Սիւ-
ղիանոսի:
14 Դշ. աձ. պահք: 4
15 Եշ. ակ. սրբ. Դիոնեսիոսի ա- 5
րիսպագաց. և առաքելոյն
Տիմոթէոսի և Տիտոսի:
16 Ուր. բձ. պահք: 6
17 Շբ. բկ. սրբ. աւետարանչացն 7
Մատթէոսի, Մարկոսի,
Ղուկասու և Յովհաննու:
☽ առ. քռ. լս.—երբեմն
անձրեւ, երբեմն հողմ:
Հրաշալի ազատութիւն
Ն. Կ. Մ. ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅ-
ՍԵՐ և Նորա Օգոստա-
փառ Ընտանիքի՝ արքա-
յական գնացքի խոր-
տակման ժամանակ:
18 ✝ Կիր. գձ. Զ. զկնի ս. 8
խաչի: Հ ա ր ս ա ն ի ք:

19 Բշ. գկ. սրբոյն՝ Ղունկիա- 9
նոսի հարիւրապետին, որ
հաւատաց 'ի խաչելու-
թիւնն Քրիստոսի, և Յով-
սէփայ աստուածահօրն,
Յովսէփայ Արեմաթայ-
ւոյն, և բարեկամին Քրիս-
տոսի Ղազարու, քերցն նորա
Մարթայի և Մարիամու:
20 Գշ. դծ. սրբ. Թէոդիտոնի 10
քահանային, Զենոնի գի-
նաւորին, եւ Մակարայ, Ես-
դոքսեայ եւ Ռոմելայ:
21 Դշ. դկ. պահք: 11
22 Եշ. ած. սրբոց Խարիթեանց 12
եւ վկայիցն՝ Արտեմեայ
եւ Քրիստափորի եւ եր-
կուց կանանցն՝ Կալինի-
կեայ եւ Ակիւլինեայ:
23 Ուր. ակ. պահք: 13
24 Շբ. բծ. սրբոց երկոտասա- 14



նից վարդապետացն՝ Ռէ-
թէոսի, Դիոնեսիոսի, Սեղ-
բեստրոսի, Աթանասի,
Կիւրղի երուսաղէմացւոյն,
Եփրեմի խորին ասորւոյ,
Բարսղի Կեսարացւոյն, Գրի-
գորի Նիւսացւոյն, Գրի-
գորի աստուածաբանին, Ե-
պիփանու Կիպրացւոյն, Յով-
հաննու ոսկեբերանին եւ
Կիւրղի Աղէքսանդրացւոյն:
25 ✝ Կիր. բկ. Է. գլնի ս.խաչի: 15
ԳԻՒՏ-ԽԱՉ: Հարանիք:
☉ լր. լս.—ամպած:
26 Բշ.գծ. սրբ. Անաստասայ.քա- 16
հանային, եւ Վարոսի, Թէ-
ոդորիտեայ, որդւոց նորա եւ
որք ընդ նմա կատարեցան:
27 Գշ. գկ. սրբ. Հիպերիքեանց, 17
որք 'ի Սամուսատ կատարե-
ցան, եւ Սեւեռիանոսի Սե-

բաստացւոյն, Բաբելայ Ծե-
րոյն եւ ութսուն եւ չորս ա-
շակերտաց նորին:
28 Գշ. դճ. պահք: 18
29 Եշ. դկ. սրբոյն Յովհաննու 19
ոսկեբերան հայրապետին:
30 Ուր. աճ. պահք: 20
31 + Շբ. ակ. տօն ամենայն 21
սրբոց, հնոց եւ նորոց,
յայտնից եւ անյայտից:

## ՆՈՅԵՄԲԵՐ

(30 օր).

1 + Կիր. բճ. Ը. զկնի ս. 22
Խաչի: Հարսանիք:
☾ վճ. քռ. լս.—խառն հողմ:
2 Բշ. բկ. սրբոցն՝ Ստեփաննո- 23
սի Հռովմայ հայրապետին,
քահանայից, սարկաւա-
գացն եւ ժողովրդոցն:



3 Գշ. դճ. սրբ. Ակիփսիմեայ 24
եպիսկոպ., Յովսէփայ քահ.,
Այիթալայ սարկաւագին
եւ Պղատոնի վկային:
4 Դշ. դկ. պահք: 25
5 Եշ. դճ. սրբ. հայրապետացն՝ 26
Մետրոփանոսի, Աղէքսան-
դրոսի եւ Պօղոսի խոստովա-
նողին, սրբ. նօտար. Մարկի-
անոսի եւ Մարտիրոսի:
6 Ուր. դկ. պահք: 27
7 + Շբ. աճ. սրբ. հրեշտակապ. 28
Գաբրիէլի, Միքայէլի և
ամենայն երկն. զօրացն:
8 + Կիր. ակ. Թ. զկնի ս. 29
Խաչի: Հարսանիք:
9 Բշ. բճ. սրբոցն՝ Մելիտոսի 1
Անտիոքայ հայրապետին,
Մինասայ եգիպտացւոյն,
միւս Մելիտոսի եպիսկո-
պոսին, Բուրայ քահանա-

յին եւ Շիրնու սարկաւագին:
☻ Ծն. լս.—սառն հողմեր:
Հայկայ Թ.—Տրէ ա.
10 Դշ. բկ. սրբոցն Դեմետ- 2
րեայ վկային եւ Բասիլիս-
կոսի քահանային:
Եօթներորդ տարեդարձ
օծման հանդուցեալ Հայ-
րապետի ամենայն Հայոց
Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ Ա.
11 Դշ. գձ. պահք: 3
12 Եշ. գկ. սրբ. Գուրիասայ, Սա- 4
մունասայ եւ Աբիբեայ սարկ.,
Ռոմանոսի միայնակեցին,
Մանկանն խոստովանողի եւ
Հիւսիքոսի զինւորին:
13 Ուր. դձ. պահք: 5
14 Շբ. դկ. սրբոց առաքելոցն 6
Անդրէի եւ Փիլիպպոսի:
Ծնունդ Ն. Կ. Մ. Կայսր-



ուհւոյ ՄԱՐԻԱ ՖԷՕԴՈ-
ՐՈՎՆԱՅԻ:
15 ✝ Կիր. աձ. Ժ. զկնի ս. 7
խաչի: Բարեկենդան Յիսա-
նակի պահոց:
☽ աւ. քռ. լս.—ամպ ցը-
րուող հողմեր:
16 Բշ. ակ. պահք: 8
17 Գշ. բձ. պահք: 9
18 Դշ. բկ. պահք: 10
19 Եշ. գձ. պահք: 11
20 Ուր. գկ. պահք: Յերեկո- 12
յին նախատօնակ:
21 ✝ Շբ. դձ. ԸՆԾԱՅՈՒՄՆ 13
Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ 'Ի
ՏԱՃԱՐՆ:
Եւս Յ. եւ Ռ.
22 ✝ Կիր. դկ: Ա. Յիսնակի: 14
Հ ա ր ս ա ն ի ք:
23 Բշ. աձ. սրբոց կուսանացն՝ 15

| | | |
|---|---|---|
| | **ՆՈՅԵՄԲԵՐ** | |
| | Յուլիանեայ եւ Վասիլուհւոյ: | |
| 24 | Գշ. ակ. սրբոցն՝ Ղունկիանոսի քահանային, Տարագրոսի, Պրօպոսի, Անդրոնիկոսի, Ոնեսիմեայ եւ այլոց աշակերտացն Պօղոսի: | 16 |
| | ☺ լր. լս.—ձիւն եւ անձրեւ: | |
| 25 | Դշ. բծ. պահք: | 17 |
| 26 | Եշ. բկ. սրբոցն՝ Կղեմայ հայրապետին եւ Բագարատայ Տաւրմենայ եպիսկոպոսին: | 18 |
| 27 | Ուր. գծ. պահք: Յերեկոյին նախատօնակ: | 19 |
| 28 | ✝ Շբ. գկ. սրբոց առաքելոց եւ առաջին լուսաւորչացն մերոց՝ ԹԱԴԷՈՍԻ ԵՒ ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍԻ: | 20 |

| | | |
|---|---|---|
| | **ՆՈՅԵՄԲԵՐ** | |
| 29 | ✝ Կիր. դծ. Բ. Յիսնակի: Հարսանիք: | 21 |
| 30 | Բշ. դկ. սրբոցն՝ Գենադիոսի եպիսկոպոսին եւ Մերկեռիոսի զինաւորին: | 22 |

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

(31 օր).

| | | |
|---|---|---|
| 1 | Գշ. ածծ. սրբոցն՝ Յակովկայ եւ Իրաւափառայ: | 23 |
| | ☾ վջ. քռ. լս.—ցուրտ, երբեմն պարզ: | |
| 2 | Դշ. ակ. պահք: | 24 |
| 3 | Եշ. բծ. սրբոց հարցն եգիպտացւոց՝ Պօղոսի, Պօղայ, Մակարայ, Եւագրի, Յօհաննու Գբնեցւոյն, Յովհաննու կարճահասակին, Նեղոսի, Արսէնի, Սի- | 25 |

սիանոս, Դանիէլի, Սրա-
պիոնի, Մակարիոսի, Պի-
մէնի եւ այլոց սրբոց
հարցն:
4 Ուր. բկ. պահք: 26
5 Շբ. գձ. սրբոցն՝ Նիկողա- 27
յոսի եւ Գրիգորի սքան-
չելագործ հայրապետացն.
եւ միւս Նիկողայոսի հայ-
րապետին եւ Միւռոնայ
եպիսկոպոսին:
6 ✝ Կիր. գկ. Գ. Յիսնակի. 28
Բարեկենդան ս. Յակով-
բայ պահոց:
Յ. եւ Ռ. Նիկողայոսի
սքանչելագործին:

Անուանակոչութիւն Ն.
Կ. Բ. Ժառանգի կայսեր
ՆԻԿՈԼԱՅ ԱԼԷՔՍԱՆԴ-
ՐՈՎՉԻ:



7 Բշ. գձ. պահք: Սրբոցն՝ 29
Մինասայ, Երմոգինեայ եւ
Գրաքոսի, եւ կամաւոր
աղքատացն՝ Յօհաննու
եւ Ալէքսիանոսի:
8 Գշ. դկ. պահք: Սրբոցն՝ 1
Կուռնելիոսի հարիւրա-
պետին, Շմաւոնի ազգա-
կանին Քրիստոսի, Պօղի-
կարպոսի հայրապետին
Զմիւռնիոյ եւ վկայիցն՝
որք յարեւելս կատարե-
ցան: Յերեկոյին նախա-
տօնակ:
⊛ Ծն. լս.—ձիւնալից օրեր:
9 ✝ Դշ. աձ. պահք: Յղու- 2
թիւն Ս. ԱՍՏՈՒԱԾԱ-
ԾՆԻ 'ի յԱննայէ:
Հայկայ Թ.—Քաղոց ա.
10 Եշ. ակ. պահք: Սրբոցն՝ 3
Եւստրատիոսի, Օգսէնտի-

սի, Եւգինէոսի, Ովրէս-
տէսի եւ Մարդարիոսի:

11 Ուր. բձ. պահք: Յերեկո- 4
յին նախատօնակ:

12 Շբ. բկ. սրբոյն Յակովբայ 5
Մծբնայ հայրապետին, Մա-
րութէի ճգնաւորին եւ Մե-
լիտոսի եպիսկոպոսին:

13 ✝ Կիր. գձ. Դ. Յիսնակի: 6
Հարսանիք:

14 Բշ. գկ. սրբոց հայրապե- 7
տացն՝ Իգնատիոսի եւ Ադ-
դէի եւ Մարութայի եպ.:
☽ առ. քռ. լ.—բքաբեր
հողմեր:

15 Գշ. դձ. սրբոցն՝ Թէոպոմ- 8
պայ եպ., Թէոնիմայ վկա-
յին, չորից զինուորացն՝ Բա-
սոսի, Եւսեբի՝ Եւտիքի եւ
Բասիլիդեայ:

16 Դշ. դկ. պահք: 9



17 Եշ. աձ. սրբոց կուսանացն՝ 10
Ինդոսի եւ Դոմնայի եւ
Գղերիկոսի քահ. եւ եր-
կոտասան բիւրոցն, որք այրե-
ցան յեկեղ. Նիկոմիդացւոց

18 Ուր. ակ. պահք: 11

19 Շբ. բձ. սրբոյն՝ Նախավկայ 12
եւ անդրանիկ Թագաւորին
մերոյ Աբգարու:

20 ✝ Կիր. եկ. Ե. Յիսնակի: 13

21 Բշ. գձ. սրբոցն՝ Աբրահա- 14
մու եւ Խորենայ. եւ ան-
արծաթ բժշկացն Կոզմայի
եւ Դամիանոսի:

22 Գշ. դկ. սրբոյն՝ Աստուա- 15
ծատրոյ վկային:

23 Դշ. դձ. պահք: Յերեկոյին 16
նախատօնակ:
☺ լռ. լ.—ձիւն եւ բուք:

24 Եշ. դկ. սրբոյն Դաւթի 17
մարգարէին եւ Յակովբայ

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

առաքելոյն։
25 Որ․ աձ․ պահք։ Յերեկո- 18
յին նախատօնակ։
Յ․ եւ Ռ․ Ծն․ Քրիստոսի։
26 Շբ․ ակ․ սրբոյն՝ Ստեփան- 19
նոսի նախավկային եւ ա-
ռաջին մարտիրոսին։
27 ✝ Կիր․ բձ․ Զ․ Յինակի։ 20
Յերեկոյին նախատօնակ։
28 Բշ․ ըկ․ սրբոց առաքելոցն 21
Պետրոսի եւ Պօղոսի։ Յե-
րեկոյին նախատօնակ։
29 Գշ․ գձ․ սրբոց որդւոցն Ո- 22
րոտման՝ Յակոբայ առա-
քելոյն եւ Յովհաննու ա-
ւետարանչին։
Բարեկ․ Ծննդ․ պահոց։
☾ վՁ․ քռ․ լռ․—ձիւնաբեր
հողմեր։
30 Դշ․ դկ․ ա․ օր ծննդ․ պահ․ 23
31 Եշ․ դձ․ բ․ օր ծննդ․ պահ․ 24

# ԵՐԱԶԱՀԱՆ

## Ա․

Աստուած տեսանելն յերազի, լաւ է տեսնողին, եւ յամեն չարէ ազատի եւ հարկիքն աւելանայ, եւ ի բանտէ ազատի, թէ աղքատ է՝ հարստանայ, թէ հիւանդ է՝ ողջանայ։

Աստուած ի տան քում տեսանել՝ նորոգութիւն է։

Աստղ յիւր տան տեսանել՝ իւր տան բարիքն աւելանայ։

Աստեղք տեսանել՝ ի ճանապարհ երթայ եւ շահի։

Աստեղք յերկնից անկեալ տես՝ մեծամեծաց մահ է եւ կորուստ։

Ասպար առնուլ տես՝ իւրեան կամ այլոցն պատիւ է։

Աբեղայ տեսանելն՝ փառք է կամ կռիւ։

Ագռաւք տես՝ թշնամիք յարձակին ի վերայ քո։

Աթոռն՝ մեծութիւն եւ բարձրութիւն է։

Ալեւոր զինքն տեսանել՝ հարստութիւն է։

Ալիւրն շահ է։

Ականջն յերազի՝ աղջիկ է եւ կնիկ։

Աղաւնին՝ շնորհք է։

Աղուէսն յերազի՝ ահ է եւ երկիւղ։

Ատամունս առաջինս հանել՝ որդւոյ մահ է։

Ատամունս ներքինս հանել՝ տրտմութիւն է։

Ատամունս մեծս հանել՝ մօտաւոր ազգական ոք մեռանի։

Արեգակն տեսանել՝ թագաւոր է։

Արեգակն յիւր ձեռքն տեսանել՝ պարոնութիւն է տեսանողին։

Արեգակն յերկնից անկեալ տես՝ թագաւորաց մահ է։

Արեգակն եւ լուսինն ընդ իրեարս ընթանալով տես՝ թագաւորք են եւ կռիւ եւ հիւանդութիւնք ցուցանեն։

Արեգակն եւ լուսինն այսր

անդր ընթանալ տես, բաժանումն
է երկրի։

Արծաթ սուրբ եւ յստակ տե-
սանես՝ հաւատք է։

Արծաթն՝ նեղութիւն եւ
ծանրութիւն է։

Արմաւենին՝ զաւակ է եւ ու-
րախութիւն։

Արիւն հեղուլն՝ վնաս մեծ է և
զէն։

Արիւն տես՝ կամ արիւն առ-
նուլն՝ շնորհք է։

Արծիւն յերազի՝ աւագ է և
մեծ պարոն։

Արծւոյն վրայ նստիս՝ պարո-
նութեան տիրանաս։

Արծւոյն հետ կռուիս կամ
զարնես՝ մեծ մարդկանց նախան-
ղտուն իւր՝ ամենեւին պիղծ, չար
եւ վնաս է։

Անձրեւն՝ ժամանակ բարի է։

Անդաստանն՝ վաստակ է եւ
ժամանակ բարւոյ։

Անասունն՝ հալալ ռոճիկ է։

Անուշահոտ ինքն՝ լաւ է եւ
հալալ ռոճիկ։

Անկանիլ ի գետն՝ թօթափի
յընչիցն եւ աղքատանայ։

Աչքն՝ գանձի շատութիւն է։

Աչս մեծս ունիլ, կենաց յաւե-
լումն է։

Աչս հանելն՝ կինն կամ որ-
դին մեռանի։

Ապարանջանն՝ նեղութիւն է։

Ապրշումն՝ լաւ է։

Առիւծ տես՝ թագաւոր է լերբ

կամ աւագ իշխան եւ մեծ մարդ։

Առիւծ երկուք ընդ միմեանս՝ կռուելն բ. թագաւոր կամ բ մեծ մարդիկ կռուելն։

Առիւծին հետ կռուիս՝ ընդ մեծ մարդոյ կռուիս, կամ ի կռիւ անկանիս։

Առիւծին վերայ նստած լինիս եւ քշես զու՝ ի պարոնութիւն վարիս։

Առիւծն ի դէմդ ելանէ՝ ահ հասանի քեզ ի մեծ մարդոյ։

Առու տեսանելն ի տան քում՝ գանձ է եւ շահ։

Ատամունքն ամենն ընկնի՝ շատ գանձ գտանէ։

Ատամն առաջին ընկնի՝ իւրեան սուգ հանդիպի։

Աղուէսն թշնամի է, որ թէ որսաս զթշնամիդ յաղթես։

Աղջիկ փոքր՝ շահ է եւ բարի։

Աղբիւրն իրաց շահ նշանակէ։

Աղբիւրն լուացուիլ՝ շահ է։

Աղբերէ ջուր առնուլն՝ վատ է։

Աղբերէ ջուր խմելն՝ շնորհք է։

Աղն եւ անանուխն՝ անոյշ խօսք է։

Աղ սպիտակ տեսանես՝ դրամ է եւ շահ։

Աղ սեւ տեսանես՝ վատ խօսք է եւ տրտմութիւն։

Աղի ձուկն՝ կսկիծ է եւ հոգս։

Աղբն չափովն՝ շահ է տեսնողին։

Աղեղն շատ զօրոյ է։

Աղեղնաւոր զէնքն տեսանել՝

թշնամի է։

Աղիւս հանելն՝ տանն շինութիւն է։

Աղքատին իւր շնորհելն՝ շահ է եւ բարի։

Աղէկ հալածն՝ ուրախութիւն է եւ շնորհք է։

Ամանաթ առնելն եւ պահելն ղորդութիւն է։

Ամբաստանել զոք յերազի՝ վնաս է խիստ է եւ վատ։

Արմաւն՝ շատ բարի է եւ անոյշ խօսք։

Այծն եւ քօշն՝ ճանապարհ ցուցանէ։

Այրեցեալ զհանդերձն տես՝ վնաս մահու է։

Այրել եւ աւերել տեսանել գայ յերկիրն։

Բոզ կնոջ խօսիլն՝ փառք է։

Բոզ տեսանել կամ խօսիլ եւ կամ խաղալ՝ շահ է։

Բոկիկ զինքն տես՝ զէն գայ իւրն։

Բորոտ զինքն տես՝ գանձ շատանայ, մեծութիւն եւ շահ է։

Բորակ տես, կամ ժողովել՝ կսկիծ է։

Բոզկ ուտելն՝ առողջութիւն է եւ շահ։

Բրինձ տես՝ շահ է եւ բարի։

Բրել կամ գործել՝ մեծ բարութիւն է եւ շահ։

## Գ.

Գառինս տես՝ մեծ շահ է։

Գառինս զենելն՝ չէ բարի։

Գառինս լուանալ՝ զէն է եւ տրտմութիւն։

Գաղան տես՝ կռիւ է եւ երկիւղ առանց վնասու։

Գանձ տես՝ կամ առնուլ՝ շահ է։

Գարի սերմանել կամ ժողովել՝ ռոճիկ է։

Գայլ անամօթ տես՝ թշնամի է։

Գայլն թէ սպանանես՝ զթըշնամիդ յաղթես։

Գայլադրաւն՝ անհաւատ մարդ է։

Գաւազան տես՝ ամրանաս ընդդէմ թշնամւոյն։

Գաւազանն յափին՝ լաւ է։

Գաւաթ բռնել ի ձեռքդ՝ զաւակ խնդման է։

Բաղուկ ազնիւ՝ շահ դուշակէ։

Բաղուկ աղտեղի՝ զգուշացիր ի մեղաց։

Բաղնիք տես՝ հոգս է։

Բաղնիք լուացուիլն՝ չարչարանօք ռոճիկ է։

Բաղանիս լուացուիլն կամ կենալն՝ մեծ նեղութիւն է։

Բադ տես՝ մեծ մարդ է։

Բակ շինելն կամ հիմն արկանելն՝ բարութիւն է։

Բահն՝ լեզու է։

Բամպակ տես՝ արդարութիւն է եւ սրբութիւն։

Բեւեռն տեսանել, կամ ժողովելն՝ մեծ բարութիւն է։

Բերդ տես՝ ի վերայ թշնամեաց իրաւանաս։

Բերդ աւերելն՝ ի նեղութե-
նէ ազատիս:

Բերանն՝ ձեռնտուութիւն է:

Բերանոյ ցամաքիլն՝ իւր ռո-
ճիկն պակասի:

Բիր տես, կամ առնուս՝ եղ-
բայր է կամ որդի:

Բիր կոտրելն՝ եղբայր մեռա-
նի, կամ ազգական:

Բլուր տես՝ երկրի շինութիւն
եւ խաղաղութիւն է:

Բու տեսանես՝ նեղութիւն է:

Բուրվառ առնուլն կամ շար-
ժելն՝ չէ աղէկ:

Բուրդ սպիտակ տես կամ առ-
նուս՝ առողջութիւն եւ շահ է:

Բուրդ սեւ՝ սուգ է եւ լաց:

Բուք արկանելն՝ ձայն գուժի
ձիս եւ կռուիս:

Արծիւն զքեզ զարնէ՝ ի պա-
րոնէ զէն հասանի քեզ:

Արմաւք, հաւք տեսանես՝ կնիկ
է հարկեւոր, գեղեցիկ եւ շնոր-
հօք:

Արջ տես՝ անիրաւ եւ անգէտ
մարդոյ խօսք է եւ ամեն գէշ
գաղան՝ թշնամի է:

Աւետարան տեսանես՝ հալալ
մուրատ է:

Աւազ տես՝ հալալ ռոճիկ է:

Աւագերէց մեռած կենդանա-
ցեալ տես՝ մեծ զրոյց կենդանա-
նայ:

Աւազակ տես՝ զգուշացիր ի
կռուոյ:

Աւագ զէնքն տեսանել՝ բարի

է եւ խիստ լաւ։

Աւագ տեսանես՝ Թշնամի յարձակի յերկիրն։

Աւագ տեսանել կամ խօսիլ՝ շնորհք է եւ բարի։

Աւրէզն որ է սուլուխ՝ շատ գանձ է։

Բ.

Բառնալ զինքն յումեքէ տես՝ շահ է։

Բառնալ եւ ընկենուլ զինքն յումեքէ՝ վնաս մահու է։

Բարձր տեղեաց ընկնիլն՝ չէ բարի։

Բարձր տեղեաց վերայ քայլես՝ մեծութիւն գտանես։

Բարեւ տալ յերազի՝ կռիւ է։

Գետ եւ հեղեղ ելանելն յերազի՝ հեծելի նշան է։

Գետ յստակ հայիլն՝ առատութիւն է։

Գետ պղտոր՝ լիութիւն է։

Գետ լուացուիլն՝ նեղութիւն է։

Գետն ի վայր երթալն՝ Թշնամին յաղթէ զինքն։

Գերի տանիլն՝ նեղութիւն է։

Գերի զինքն տեսանել՝ մեծութիւն է եւ շահ։

Գերանն որ կոտրի՝ տանուտէրն մեռանի։

Գերեզման բանալն՝ վնաս է։

Գեղեցիկ պատկերօք զինքն տեսանել՝ փառք է։

Գեղեցիկ պատկեր նկարած տես՝ նոյն է։

Գէշ հոտ առնուլն՝ գէշ խօսք է։

Գեր զինքն տեսանել՝ տղայոց աճումն է։

Գինի անապակ տեսանել, կամ խմել եւ կամ գնելն՝ ուժ է եւ շահ։

Գինի դեղով խմելն՝ հարամ ռոճիկ է։

Գինձ տեսանել՝ անուշ խօսք է։

Գինձ ուտել կամ ժողովելն՝ կռիւ է։

Գինտ հագնիլն՝ շահ է մեծ։

Գինտ հանելն յականջէն՝ վնաս մահու է։

Գիշերի ի ճանապարհ երթալն՝ նեղութիւն է։

Գիսաւոր աստղ տես՝ մեծութիւն է եւ պատիւ։

Գիրք կարդալն՝ ժողովք ցուցանէ։

Գիր տեսանել կամ կարդալն՝ իւր մարմնոյն նեղութիւնէ եւ ցաւ։

Գիր գրելն՝ բարի և հալալ մուրատ է։

Գլխատել զինքն տես՝ վնաս մահու է։

Գլուխ կտրած ի ձեռքն առնուլ՝ շատ գանձ գտանէ։

Գլուխն դեղ քսելն՝ անուշ խօսք է։

Գլուխ յածիլես՝ յամէն նեղութենէ ազատիս։

Գլուխ այլոց ածիլելն՝ ի ցաւոյ դժուար զերծանի։

Գլուխ սպիտակն՝ յանկարծ շահ է։

Գխտոր տես՝ ցնորք և աղքա-
տութիւն է:

Գնտի խաղալն՝ պարոնին լաւ
է, փոքր մարդոյ դէշ է:

Գոմէշ տեսանելն՝ շահ է և
ուրախութիւն:

Գոմ շինելն՝ շահ է ուրախու-
թիւն:

Գոյնզգոյն հալաւն՝ խնդու-
թիւն է:

Գորտան ձայն լսելն՝ խնդու-
թեան զրոյց գայ:

Գորտ թէ սպանանես՝ հետ
հաւատացեալ մարդոյ հաշտութիւն
առնես:

Գտակ հագնիլ տես՝ հարկինք է:

Գրաւական հանել ի տանէն՝
վնաս մահու է:

Գրող տես՝ մահն մօտացեր է:

Գրիչն և կաղամարն՝ իրիցուն
խնդք է, կամ ճանապարհ.

Գրչի ամանն՝ կին է:

Դ.

Դահեկան յումեքէ յինքն առ-
նուլ և տեսանել՝ շահ է, կամ
կին առնու և տղայք վաստակի:

Դամոնն հիւանդութիւն է:

Դանակ տես. կամ գնել՝ չէ
լաւ:

Դաշտ տես՝ աջու բան առնես:

Դատաւորն՝ Աստուած է:

Դատաւոր տեսանել՝ պարոնին
պարոնութիւնն յաւելնայ:

Դատաստանն՝ մեղաց քննու-
թիւն է:

Դարպաս չինելն՝ հարուստ կին է։

Դարբին տես՝ մեծ մարդ է։

Դարբնութիւնն թէ ինքն առ-
նու՝ լաւ տանուտէր լինի։

Դարբնի սովրածն զինչ որ լի-
նի՝ ամենն բարի է։

Դեղին սեխն, դեղին հալաւն,
դեղին ձի հեծնուլն, դեղինն ա-
մենևին վատ է և հիւանդութիւն։

Դև տես՝ վնաս, նեղութիւն եւ
մեղաց նշան է։

Դգում ցանելն՝ ջերմ է և
ուտելն հիւանդութիւն։

Դի տեսանես՝ զրոյց բարւոյ է։

Դիպակ տես. կամ ագանիլ
մեծ պատիւ է։

Դմակ տես. կամ ուտելն հի-
ւանդութիւն է։

Դուռն տեսանել՝ պատիւ է և
հետ մեծ մարդոյ ծանօթանայ։

Դուռ բանալն՝ իւր բախտն
բացվի և իւր կամքն կատարի։

Դուռ կոտրելն՝ մահու նշան է։

Դուր տես՝ պատիւ է։

Դրամ տես. կամ ժողովել՝ ա-
գահութիւն է։

Դրացուն բարև տալն՝ կռիւ է։

## Ե.

Եզն տեսանել՝ ահն գնայ։

Եզն նստման՝ անհոգութիւն է.
կամ մեծ աւետիս գայ կամ զու-
գակից սիրելի։

Եզինք և սայլք՝ նեղութիւն է։

Եզանց կռուիլն՝ երկրի ահ է
կամ թշնամի։

Եղն մորթել՝ վնաս մահու է։

Եկեղեցի տեսանել կամ շինել՝ փառք է. բայց ոմանք ասեն թէ նեղութիւն է։

Եղ ուտելն՝ բարի է։

Եղնիկն ի տան տես՝ ղուգակից է կամ սիրելին գայ իւրն։

Եղջերուն երկրի՝ նեղութիւն է։

Երգեհոնն՝ տրտմութիւն է։

Երկիրն՝ խնդութիւն է։

Երկանք աղալն կամ տեսանելն՝ անհանգստութիւն է։

Երկաթ տես. կամ գնել՝ տըրտմութիւն է եւ յոյժ վատ։

Երակ առնուլն՝ սրբութիւն է։

Երակ կտրելն՝ վնաս մահու է։

Երես լուանալ տես՝ ղէն է։

Երես կարմիր՝ բանն աղէկ լինի

Երես դեղին՝ մեղք է։

Երես աղէկ՝ մեծ փառք է։

## Զ.

Զանգակի ձայն լսես յերազի՝ խնդումն է եւ ուրախութիւն։

Զաֆրանն՝ հիւանդութիւն է։

Զաֆրանով կերակուրն՝ լաւ է։

Զենելն՝ մեծ նեղութիւն է։

Զինաւոր տես՝ պատրաստ կաց, զի տրտմութիւն է։

Զմրուխտն՝ լաւ է։

Զնդանն յերազի՝ մեծ հոգս է եւ սուգ։

Զուռնայն կամ զձայնն լսես՝ անձրեւ է կամ կռիւ։

Զրոյց տալն՝ նեղութիւն եւ չարութիւն է։

Զրեհն պարծութիւն է։

## Է.

Երէց մեռած տեսանել՝ մեծ զրոյց խափանի։

Երէց ի մեռելոց յառնել՝ հին խօսք ի զրոյց գայ։

Էշ բազում տես՝ նեղութիւն է։

Էշ խառն՝ նախանձ է։

Էշ ճերմակ տես. կամ օտար, կամ բարձեալ եւ հեծեալ՝ բարի է եւ պատիւ։

## Ը.

Ընդ իշխանսն խօսիլ տես՝ բարի է։

Ընդ այլ ումեմն մարդոյ խօսիլն շահ է եւ փառք։

Ընդ այլ կնոջ խօսիլ՝ տրտմութիւն է։

Ընդ անօրինի խօսիլն՝ սրբութիւն է։

Ընդ կուսի հաց ուտելն՝ բարի է։

Ընդ խաղաղ գետ անցանելն՝ չէ աղէկ։

Ընդ պղտոր գետ անցանելն՝ նոյն է։

Ըղունկն կտրել՝ վնաս է։

Ըղունկ ունենալ՝ աղքատութիւն է։

Ընկոյզ ժողովելն՝ չէ աղէկ։

Ըռումբն՝ երկիր է։

Ըրախի խմելն՝ ուրախութիւն է, բայց ոմանք ասեն թէ տրտմութիւն է։

## Թ.

Թագաւոր ողջունելն յերազի՝ փառք է։

Թախտն՝ մեծութիւն է։

Թախտ կանաչ տես՝ ցաւ է։

Թանաք եփելն՝ լաւ է։

Թանաք ի վերուստ վաթես՝ գէշ խօսք է։

Թարախով զինքն տես՝ շահ է եւ հարստութիւն։

Թաքստի զինքն տեսանել՝ բարի է։

Թեւաւոր զինքն տես՝ հոգւոց դիպի։

Թթու մածուն ուտելն՝ հարամ ռոճիկ է։

Թթի ծառն՝ հարուստ մարդ է։

Թիւր զինչեւիցէ՝ նեղութիւն է։

Թզի ծառն՝ լիրբ մարդ է։

Թուզ դալար տեսանել կամ ուտել՝ վնաս է եւ փոշիմանութիւն։

Թուզ չոր ուտելն՝ շահ է։

Թուխ մորուս ալեւոր տեսանելն շահ է։

Թուխ զինքն տես՝ մեծութիւն է անձին։

Թռչելն յերազի՝ յայլ տեղ երթայ։

Թէ թռչի որ բարձրանայ՝ ի լաւութիւն հասանի։

Թէ թռչունն յանձն քո մերձենայ՝ մարդ երանէ քեզ։

Թռչուն արձակելն՝ մեծ բարութիւն է։

Թռչուն փախչիլն՝ մեծ վնաս է։
Թռչունն թէ խաղայ ընդ քեզ՝ քո թշնամիքն սիրեն զքեզ։

## Ժ.

Ժամատուն զարդարած տես՝ արքայութեան արժանի լինիս։
Ժամ երթալն՝ կեանք բարի լինի։
Ժամատուն մտանելն՝ հաւատքին լաւ է։
Ժամատանն աղօթելն՝ լաւ բան առնել է։
Ժամ առնելն՝ աղէկ է։
Ժողովք տեսանել՝ ժխորումն է։
Ժամացոյց տեսանել՝ օգուտ է։

## Ի.

Ի մանկութեան զինքն ալեւոր տես՝ կենաց յաւելումն է։
Ի յալեւորութեան զինքն մանուկ տեսանել՝ նոյն է։
Ի ծովակի նստիլ՝ զուարթութիւն է անձին։
Ի նաւ նստիլն՝ պատիւ է։
Ի բարձր տեղւոջ նստիլ՝ պատիւ առնու յաւագաց։
Ի յանապատի նստիլ՝ հիւանդութիւն ցուցանէ։
Ի կին նստիլ՝ բարի է եւ լաւ։
Ի ձի ճերմակ նստիլ կամ ի սեւ՝ պատիւ է եւ բարի։
Ի ձի վազան նստիլն՝ խիստ աղէկ է։

Ի սեւ ջրի եւ ի ձի նստիլն՝ ի մեծամեծաց շահ տեսանէ։

Ի գայլ նստիլ՝ նեղութիւն է։

Ի կառ նստիլ՝ մեծ պատիւ է։

Ի լաց նստիլն՝ շատ նեղութիւն է։

Ի բարձր տեղուջէ անկանիլ՝ ի փառաց անկանի։

Ի լուծս դնել զեզինս՝ զրոյց է։

Ի սերմանիս ձեռն արկանել՝ կամ վարել՝ բարի է։

Ի ջրհոր կամ ի գետն անկանիլ՝ ի նեղութիւն անկանի։

Ի ջրհորէ, ի գետէ կամ ի ծովէ ելանելն՝ պատիւ է եւ ազատութիւն, չելանելն վնաս է մեծ։

Իրք մի ուզեն քեզանէ՝ պատիւ է։

Ի գերեզման զինքն տեսանել՝ դատաստանաց հանդիպի եւ բանտի։

Ի մեռելոց իրք առնուլն՝ շահ է եւ բարի։

Ի մեռելոց պագ առնուլն՝ զէն է եւ վնաս։

Ի թռչման զինքն տես՝ յայլ երկիր վարի եւ մեծութեան հանդիպի։

Ի վայրի գազանէ հալածիլ՝ ի զօրաւոր մարդոյ պատրաստ կաց կամ թշնամի յաղթէ քեզ։

## Լ.

Լոյս տեսանես՝ աշխարհի խաղաղութիւն է։

Լոյս շիջեալ՝ տրտմութիւն է։

Լուսին եւ արեգակն տեսանես յայգին՝ վնաս է ազգին։

Լուսնի աստղն՝ խիստ շահ է։

Լուսինք բազումք՝ աճումն է երկրին։

Լուսինն կարմիր՝ վնաս է։

Լուսինն խաւար՝ Թագաւորին մահ է։

Լուսինն բ. տեսանել՝ բ. Թագաւոր յառնեն ի վերայ միմեանց։

Լուն՝ ռոճիկ է։

Լուծ դնելն՝ վատ է։

Լուծք եզանց՝ բարի է։

Լեառն՝ տրտմութենէ ազատիս։

Լեհէպն (վերմակն) հարուստ կնիկ է։

Լիմոնն անոյշ խօսք է։



Խաչակնքել զինքն տես՝ մեծ պատւոյ նշան է։

Խաչն չարչարանք է։

Խաչափառն՝ դատարկ մարդ է։

Խաւարն՝ նեղութիւն է։

Խաւիարն՝ հիւանդութիւն է։

Խաղողն՝ անձրեւ է։

Խաղող սպիտակ՝ խնդումն է, սեւ խաղողն՝ լաց է։

Խաղող ժողոված՝ գանձ է։

Խայտ հանդերձ տես՝ աւագ մեռանի։

Խարտալ տես՝ օտար կին մերձենայ։

Խարփիզակ սեւ և սպիտակ կամ կանաչ տեսանելն՝ լաւ է,

բայց ունելն՝ հիւանդութիւն է։

Խիարն՝ ուրախութիւն է։

Խեցեղէն աման ունիլն՝ ուրախութիւն է։

Խմոր ունելն՝ շահ է։

Խնդալն՝ չէ լաւ։

Խնձորն՝ տղայ և աղախին է, և ունելն շահ։

Խնձորն թէ ընդ քեզ տան՝ աւետիս է։

Խնձորի ծառն՝ մեծ մարդ է։

Խուլն և համրն՝ շահ է։

Խունկ ծխելն՝ ինչք և ապրանք է, և անոյշ խօսք է։

Խորոված միս ունելն, շահ է։

Խոզի միս տես՝ մահ է կամ այլազգի։

Խոզի միս ունելն՝ ազգականաց մահ է։

Խոտն՝ լաւ մարդ է։

Խոտ ժողովելն՝ պատիւ է և փառք։

## Ծ.

Ծաղկեալ անդաստան տեսանես՝ շահ է և ուրախութիւն։

Ծաղիկն՝ անհոգութիւն է։

Ծաղիկ քաղել՝ կին առնու։

Ծաղկիլն՝ բարի է։

Ծաղկած ծառն՝ նոյն է։

Ծառ տնկելն՝ յիշատակ է, կամ այլ բան բարի։

Ծառ պտղով՝ բարի է։

Ծառ կտրել կամ այրել՝ վընաս է։

Ծառն թէ ծուխ լինի՝ չէ լաւ։

Ծառին տերեւն թափի՝ ա-
րիւնհեղութիւն է։
Ծառ անկանիլ՝ մարդոյ մահ է։
Ծառ մեծ խլել՝ յաւագաց ումն
անկանի։
Ծառի վերայ գնալն՝ փառք է։
Ծառ կանաչ՝ գանձ է։
Ծառ չոր՝ տրտմութիւն է։
Ծառ կտրելն՝ բաժանումն է։
Ծառան՝ աւետիք է եւ խըն-
դութիւն։
Ծարաւիլն՝ չէ բարի։
Ծանր շալակելն՝ մեծ մեղք է։
Ծիծաղիլն՝ տրտմութիւն է։
Ծիծն՝ տղայ է կամ մեծու-
թիւն։
Ծնանիլ կնոջն՝ մեծ շահ գայ։
Ծունր ածելն առ Աստուած՝
յոյս է։
Ծով տես՝ շատ հեծել է։
Ծով պղտոր՝ նեղութիւն է։
Ծով ցամաք՝ լիութիւն է աշ-
խարհի։
Ծովն լուացվիլն՝ շահ է։
Ծովն ի ներս երթաս՝ ի վե-
րայ թշնամեաց իրաւանաս։
Ծովն զմարդն ի ներքս քար-
շէ՝ տեսնողն դողի ձեռօք սպանվի։

Կ.

Կամուրջ շինելն՝ յոյժ լաւ է։
Կայծակն՝ խռովութիւն է։
Կանաչ ծաղիկն՝ բարի է։
Կարկուտն՝ երկրի նեղութիւն է։
Կարասն՝ նեղութիւն է։
Կապուտն՝ աւերումն է։

Կաղամբի տակ հանելն՝ վնաս է ըստ Դանիէլի։

Կենդանի զէնքն ի գերեզմանի տես՝ մեծ զրոյց է։

Կին առնուլն՝ վնաս մահու է։

Կին հերարձակ՝ նոյն է։

Կին գեղեցիկ և զարդարած՝ երկիր է կամ քաղաք։

Կնոջ հեր կտրելն՝ յոյժ վնաս է։

Կոյս զինքն տեսանել՝ խիստ շահ է։

Կուժն՝ որդի է։

Կուժ ջրով տես՝ բարի է ամենեւին։

Կուպղայ տես՝ պատիւ է։

Կումաշ տես՝ հիւր է։

Կորեկ տես կամ ուտել՝ լիութիւն է։

Կրակ անկանիլն՝ մահ է և սով։

Կտաւ հանել՝ չէ բարի։

Կօշիկ տեսանել կամ ագանիլ՝ ճանապարհ է։

## Հ.

Հաց տեսանելն՝ բարի է և լաւ։

Հաւն՝ զուարթուն է։

Հաւ սիրամարգ տես՝ մեծ իշխան է։

Հաւ ի ձուի վերայ՝ յանկարծ շնորհք է։

Հաւ ի խօսիլն՝ մարդ ի կենաց անկանի։

Հաղորդ առնուլն՝ ծեծ է մարդոյն։

Հասկ քաղելն՝ ուրախութիւն է, ըստ Պղատոնի։

Հարսանիսն՝ տրտմութիւն է։

Հայրապետն՝ մեծ զրոյց է։

Հայրն մեռած կենդանացեալ՝ մեծ շահ է։

Հալաւն այրած՝ շահի ի կնոջէ։

Հանդերձն՝ հեծել է եւ թըշ-նամի։

Հանդերձ կորուսանելն՝ վնաս է։

Հանդերձ գոյնզգոյն ունիլ՝ նոյն է։

Հեռաւոր զինքն տես կամ զայլ ոք՝ շատ շահ է և բարի։

Հիմն արկանել՝ հարստութիւն է։

Հիմն ի վերայ հիման դնել և շինել՝ բարի է։

Հիւանդ տեսանել՝ նեղութիւն է։

Հող բանալ տես՝ նոյն է։

Հում միս ուտելն՝ զրոյց է։

Հոր փորելն՝ յոյժ նեղութիւն է։

## Ձ.

Ձեռն լուանալ տես՝ բարի է։

Ձեռն ծրագ՝ որդի լինի։

Ձէթ եփելն՝ հիւանդութիւն է։

Ձիթենով օծանիլն՝ շնորհք է։

Ձիթապտուղ ժողովելն՝ բարի է։

Ձի նստիլն՝ մուրատ է և լաւ։

Ձու տեսանել կամ ժողովել՝ կռիւ է։

Ձոր տես կամ անցանելն՝ ի նեղութենէ ազատիս։

Ձուկն ի ջրոյն հանել՝ ամպ լինի կամ ձիւն՝ և կամ լինի ջերմ։

Զուկն ի կրակին՝ երկրի նե-
ղութիւն է։
Զուկն՝ չար լեզու է և վա-
տաբանութիւն։

Ղ.

Ղան կամ սուլթան տես՝ ան-
չափ աղէկ է։
Ղեկաւ գնալն՝ հետ մեռելոյ
գնալ։
Ղամպար վառելն՝ բարի է։

Ճ.

Ճանապարհ երթալն և յետ
դառնալն բարի է։
Ճանապարհ երթալն՝ ինեղու-
թենէ ազատիլ։
Ճապան կամ ճուան տես՝ եր-
կայն ճանապարհ է։
Ճառ գրոց տես, և լսել՝
հոգս է։
Ճնճղուկ տես կամ ունիլ՝ բա-
րի է։
Ճրագ վառեալ տես՝ ծածուկ
գործք յայտնին։
Ճրագ անցեալ տես՝ կործա-
նումն է տան։

Մ.

Մանուկ մօրուօք կամ ծեր
ալևոր տեսանել՝ կենաց յաւե-
լումն է։
Մատանի կամ պատմուճան՝
իշխանութիւն է։
Մատանի կորած՝ վնաս է։
Մատանի կորուսանել՝ կին կամ

սիրելին մեռանի։

Մատանի այլոց առնուլ՝ անհոգութիւն է,

Մատանի բ. ունիլ՝ բ. կին առնու։

Մատանի արծաթի՝ ի նեղութենէ ազատիս։

Մատակ յուղտ նստիլն՝ հիւանդութիւն է։

Մարգարիտ տես՝ մեծութեան նշան է։

Մարդոյ լեարդ ուտել՝ գանձ տեսանէ.

Մարդոյ ոսկոր ուտել՝ ի բանտ մտանէ։

Մեծահասակ ինքն տես՝ փառք է։

Մեծ փակեղ ուսողն՝ անկեալ մեծ շահ է։

Մեռել տես կամ ազգականն, կամ ի մեռելոյ իրք առնուլն, կամ մեռել կենդանանալն՝ մեծ և անցեալ զրոյցն յառնէ։

Մեռած զէնքն տես՝ շատ ապրի։

Մեռելն թէ խօսի՝ զգոյշ լեր, մի հաւատար ումեք։

Մեռել թաղելն՝ շփոթումն է։

Մեռել ի գերեզմանի տես՝ խափանի չարն։

Մեռել բազում տես՝ արձակին թշնամիք։

Մեղր ուտելն՝ մեղք և սրտնեղանք։

Միս տես և կամ ուտել՝ հիւանդութիւն է։

Միրգ այսինքն եմիշեղէն ուտելն՝ հիւանդութիւն է։

Մոմ վառած՝ ուրախութիւն է և որդի։

Մորեխն՝ հոգս է և աշխարհի նեղութիւն։

Մութն և մուկն՝ վնաս է և չար։

Մորուօք զինքն տես՝ շնորհք է։

Մօրուս գէշ՝ զէն է և փետելն խաղաղութիւն։

Յ.

Յաթոռ նստիլն՝ բարձրութիւն է։

Յաւագ երթալն՝ բարի է։

Յաւազան ձեռն արկանել՝ ի մեծ մարդոյ իրք առնուս։

Յաղբերէ ջուր խմելն՝ բարի է։

Յամպոյ ճայթմունս լսելն՝ չէ բարի։

Յարջէ հալածիլ՝ ի կռուոյ ազատիս։

Յեկեղեցի երթալ՝ ի ծանրութենէ ազատիս։

Յերկինս ելանել՝ մեծ պատիւ է։

Յերկինս ձեռն ի վեր կալով՝ մահ է։

Յերազի իրք ուզելն՝ պատիւ է։

Յերազի երազ պատմելն՝ յոյժ լաւ է։

Յիւր երկրէն ելանել՝ ի նեղութենէ ազատի։

Յորս երթալն՝ բարի է։

Յուղտ նստիլն՝ պատիւ է։

Ն.

Նախիր տեսանես, որ ի գիւղն գայ՝ աւագ է։

Նախիրն որ շուրջ գայ՝ խռովութիւն է։

Նապաստակ ունենայ՝ իւր նըման տղայ լինի։

Նաւորդ լինիլն՝ զրոյց ելանէ։

Նաւ ոսկւոյ կամ արծաթոյ տես՝ բարի է։

Նաւ նստիլ՝ շատ ժամանակ ապրի։

Նաւ երամով՝ ի հեռաստանէ շահ գայ։

Նաւ գանձով՝ նեղութիւն է։

Նաւ այրիլն՝ երկրի խռովութիւն է։

Նաւ կոտրած՝ մահու նշան է։

Նոր իրք տես՝ յօտարութիւն երթայ։

Նուռն՝ յօտարաց շահ է։

Շ.

Շապիկ սպիտակ տեսանել կամ ագանիլ՝ արդարութիւն է, սեւն տրտմութիւն է, աղտոտն՝ մեղք է։

Շեղջ ցորենոյ տեսանել՝ ղամ է։

Շէնք շինելն՝ բարութիւն է, և քակելն վնաս։

Շէրպէթ խմելն՝ խելաց յաւելումն է։

Շիշ իւղով՝ ռոճիկ է և շահ։

Շողն՝ փառք է։

Շուք առնելն՝ մեծ պատիւ է։

Շունք ընդ իրեար կռվին՝ չէ լաւ:

Շունն հաչէ կամ խածանէ՝ լեզու է և ի չար մարդոյ պատրաստ կաց:

Շունն կամ թեւաւոր գազանք՝ թշնամիք են:

## Ո.

Ոսկի խնձոր տեսանես՝ պատիւ է:

Ոսկին կամ արծաթն՝ շահ է:

Ոչխար տես՝ ձմեռն է և ցուրտ:

Ոչխար սեւ՝ սուգ է և տրտմութիւն:

Ոչխար ի ճանապարհի՝ հարստութիւն է:

Ոջիլ կոտրելն՝ մաշումն է:

Ոսկր քերելն՝ լաւ է:

Ուղտ տեսանես՝ պարոն է:

Ուղտ ի նստման՝ հաւատք կամ նուաղութիւն:

Ուղտ բ. կռվին՝ իշխանք կըռվին:

## Ձ.

Ձամիչն՝ յոյժ վնաս է:

Ձամանն՝ կոխ է:

Ձանկն՝ տրտմութիւն է:

Ձարխ զինքն տես՝ ի չարէ ազատի:

Ձիրն՝ սակաւ շահ է:

Ձոր ծառն՝ մեռեալ մարդ է:

Ձոր միսն՝ ուճիկ է և շահ:

Ձուխայ սպիտակ տես՝ արդարութիւն է:

Ձուխայ կանաչ՝ հարստու-

թիւն է։

Չուխայ սև՝ տրտմութիւն է։

Պ.

Պատարագ տեսանել՝ կռիւ է։

Պարտէզն՝ բարի է և արդարութիւն։

Պարտէզ գործելն՝ բարի է։

Պշպեղ տես՝ կսկիծ է։

Պշպեղն ուտես՝ ի թշնամեաց պատրաստ կաց։

Պսակվիլն՝ յոյժ լաւ է, ոմանք ասեն թէ կռիւ է։

Պսակ արծաթի՝ հիւանդութիւն է։

Պսակ ի փշոյ՝ մեծ շահ է։

Պսակ քարեղէն՝ մեծութիւն է։

Ջ.

Ջրաղաց շինելն՝ մեծութիւն է, և աւերելն, շինութիւն։

Ջրաղացի աղունն՝ հիւանդութիւն է։

Ջհուտ տեսանես՝ հետ անհաւատ մարդոյ խօսիս։

Ջայլամ հաւն՝ ի նեղութենէ ազատիս։

Ջուր սուրբ ըմպելն՝ խիստ լաւ է։

Ջուր ի տան քում տես՝ չէ լաւ։

Ջուր պղտոր տես կամ ըմպել՝ տրտմութիւն է։

Ջուր ի գնացման տես՝ բարի է։

Ջուր յաղբերէ առնուլն՝ բարի է։

Ջուր շատ տես՝ կամ անցանել, հեծեալք են։

Ռ.

Ռեհան ծաղիկն՝ բարի է։

Ռոճիկ տես՝ յոյժ վատ է։

Ռումբ կանգնած տես՝ մեծութիւն է և պատիւ։

Ռումբ ի ձեռին ունիլ՝ ճանապարհ է և երկիր։

Ռուս տես՝ մեծ հակառակութիւն է։

Ս.

Սագ տեսանես՝ մեծ մարդ է։

Սալորն՝ առողջութիւն։

Սաղաւարտն՝ անհոգութիւն է։

Սամիթ դալար տես՝ լաւ է։

Սամիթ չոր՝ չէ լաւ։

Սանդուղ կանգնած տես՝ մեծութիւն է և բարի։

Սանտր ածելն՝ զէն է։

Սարօք ջրի կամ ձի տես՝ մեծութեան հասանիս։

Սենեակ քակելն՝ ի կնոջէ բաժանի։

Սիսեռն՝ բարի է։

Սիւնն՝ նեղութիւն և կռիւ է։

Սխտորն և սոխն և սապոնն՝ կսկիծ են։

Սոխ և սագի միս ուտելն՝ հիւանդութիւն է։

Սուգն՝ ուրախութիւն։

## Վ.

Վախեալ կամ փառեալ զինքն տես՝ հարստութիւն է։

Վանք աբեղայ տես՝ նեղութեան ամբոխ է։

Վառած զոք տես՝ վնաս է։

Վարդ տես՝ կին առնուս։

Վարդ քաղելն՝ բարի է։

Վիշապ տես՝ պարոն կամ աւագ է։

## Տ.

Տաճար զարդարած տես՝ բարի է։

Տաճար այրելն՝ խռովութիւն է։

Տաճիկ տես՝ արձակումն է թըշնամեաց։

Տախտ դիպակով՝ բարի է։

Տանձ ուտելն՝ հիւանդութիւն է։

Տառեխն՝ ճանապարհ է։

Տիկն և տիկինն՝ տրտմութիւն է։

Տղայ ի գիրկն առնուլ՝ ցաւ է և հիւանդութիւն։

Տուն շինելն՝ յոյժ բարի է։

Տունն աւիրել՝ չէ բարի, գանձի և ոսկւոյ զէն է։

Տուն իւր կամ այլոց աւիրած տեսանել՝ չէ լաւ, անիրաւութիւն է։

Տուն իւր կամ այլոց արծաթի տես՝ վնաս մահու է։

Տունկ արկանելն՝ ազգաց օրհնութիւն է։

## Ց.

Ցեխն, որ է չամուռ՝ վնաս է և տրտմութիւն:

Ցեցն՝ լեզու է:

Ցեցն՝ չար լեզու է:

Ցից հանելն՝ նեղութիւն է, ոմանք ասեն թէ լաւ է:

Ցորեանն՝ ցնորք է:

Ցուլ բռնելն՝ աղէկ է:

## Փ.

Փայտ տեսանելն կամ առնուլն՝ յոյժ բարի է:

Փոխինդ ուտելն՝ զէն է:

Փող հարելն՝ թշնամիք կորնչին:

Փող հարկանելն՝ մեծութիւն է, և բախտի տիրանայ:

Փուշ հատանելն՝ թշնամեաց կորուստ է:

Փուշն թէ ի յափդ ժողովես՝ չար ժամանակ է:

Փոքր մարդ տես՝ շնորհք է:

## Ք.

Քաղաք մտանել՝ բարի է:

Քաղցր իրք ուտելն՝ չէ լաւ:

Քար ձգելն՝ վնաս է:

Քարինս ժողովելն՝ լեզու է:

Քար ի հիմն ձգել՝ թշնամի է:

Քարի վերայ նստիլն՝ մտածմունք է:

Քացախ խմել տես՝ խափանի չարն:

Քղամիդ հագնիլն՝ խնդութիւն է:

## Օ.

Օձն թէ հետ իւր խօսի՝ այնպիսի բան առնէ որ ամեն մարդ և աշխարհ ամենայն զարմանայ։

Օձն թէ սպանանէ՝ թշնամին յաղթէ։

Օձն թէ ի մահճի տեսնու՝ կին առնու։

Օձն թէ խայթէ՝ ի թշնամեաց զէն գայ։

Օձն թէ յիւր վերայ յարձակի՝ ի թշնամեաց ահ գայ։

Օձն թէ ի փորն մտանէ՝ ի թշնամեաց չար խօսք լսէ։

Օձն թէ ի վերայ անկողնոյն սպանանէ՝ իւր կին մեռանի։

Օձն թէ տեսնու և չվախէ՝ ի թշնամեաց անհոգանայ։

Օձն թէ յիւր տան մէջն տեսնու՝ իւր կինն յետ իւր թշնամանայ։

Օձն եթէ երկու կտոր առնէ՝ յիւր թշնամւոյն իւրեան շահ գայ։

Օշինդր տեսանել կամ խմել՝ կռիւ է։

## ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ ԿՈՂՄԻՑ

Աչքի առջեւ ունենալով այն հանգամանքը, որ հայ հասարակութեան մեծամասնութիւնը օրացոյցի գործածութիւնն անհրաժեշտ է համարում, կենդրոնական գրավաճառանոցը կցում էր նորան իւր վաճառատան հայերէն գրքերի ցուցակը նոցա գործածութեան համար. բայց որովհետեւ գրացուցակը փոքր դիրքով միշտ թերի էր լինում, վասնորոյ այժմ լոյս ենք ընծայում առանձին գրքոյկով կարեւոր չափ լիակատար, որ եւ բաժանւում է Թիֆլիզում ձրի, իսկ օտարաքաղաքացոց 8 կոպէկ ճանապարհածախք վճարողներին:

—

Գրավաճառանոցը հետեւեալ պայմաններն է առաջարկում օտարաքաղաքացիներին. — գրքեր ուղարկում են կամ կանխիկ եւ կամ վերադիր վճարով, վերջին դէպքում խանութին անծանօթ անձինք մի մասը վճարում են կանխիկ:

Հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանների պահանջը պէտքէ գրուած լինի դպրոցի կնիքի վերայ եւ գանձապահ-հոգաբարձուի ստորագրութեամբ:

Օտարաքաղաքացիներին գիրք ձեռք բերելը դիւրացնելու նպատակով գրավաճառանոցն այսուհետեւ զիջում կանէ, երբ պահանջը 10 ռուբլուց պակաս չէ, բացի այն գրքերից, որոնք տպուածեն մայրաքաղաքներում եւ

արտասահման, որոնցից աւելի քիչ զեղչ է ստացւում, քան երկեան ճանապարհի ծախքն է:

Վաճառականները ստանում են առանձին պայմաններով եւ համաձայնութեամբ:

ՊԵՏ ԿԱՆ ԳՐ-ԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.

Գումարով զիջում է լինում։

2(059)
Ա-45

5539

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0033208